



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1224

1225

1226

1227

1228

1229

1230

1231

1232

613.8
Z-26

- 7086
- M-1574 *Oreomyza bottae*
1514 *Acacia-mim.*
1522 *St. Phoebe formosa-mim.*
1466 *Pitcairnia* (by *Euphorbia*)
~~1440~~ ~~1440~~ *Thunbergia fragrans*
1618 *Wrightia*-mim.
1614 *As & Agave* (Chamisso)
1722 *Cymbidium* unsp.
1723 *Dactyloctenium* unsp.

John Smith

2002

2010


Բժ. Ա. ԲՈՒԴՈՒԹԵԱՆ



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ 三
ԱՌՈՂՋԱՄԱՅՈՒԹԻՒՆ

Ltn
354

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Բացուած է բաժանորդագրութիւն 1907 թ.

— ՀԱՍԿԵՐ —

Մանկական պատկերազարդ ամսաղրի:

Բաժանորդաղինն է տարեկան 4 ր.

Հասցէն՝ Թիֆլիս, Բէհքութեան փողոց, № 25.

Խճ. Հրատ., ԿԱ. Հիմի 860.Ն

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ն

Ե. Թոփշեանի
խմբագրած „Լ Ո Յ Ս“ ՊԱՏԻ ԵՒ
ԳՐՊԱՆԻ

1908 թ.

Օ Ր Ա Ց Ո Յ Յ Ն Ե Ր Ը

Պատի օրացուցի գինն է 40 կ., զրավանին՝ 20 կ.

Գիմել՝ Թիֆլիս, Մադատովսկայա 5, Ե. Թոփ-
շեանին, կամ «Գուտենբերգ» գրավաճառանոցին:

1. Փողովրդի առողջութեան բայրայումբ; 2. Տնտեսական անապահովութիւն, տգիտութիւն, բնակարանային կարիք; 3. Կոնց վիճակը, ուսումնաբանական առողջապահութեան բացակայութիւնը; 4. Գործարանա-ձուլաբանային բանւորների կեանքը; 5. Մահացութիւն և չիւանգութիւն, բժշկական օգնութեան անբաւարարութիւնը; 6. Կոհւ երեխաների մահացութեան դէմ; 7. Առողջապահական գիտելիքներ; 8. Թորախտ—բարակացաւ, սիֆիլիս; 9. Արբեցողութիւն և կապիտալիզմ; 10. Զեմստվո և մանր զեմստվյական միութիւն; 11. Միութիւն «Արտ»:

Ա. ՊԵՏԵՐԻ ՀՐԳ.
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ, ԼԵՇՈՒԿԱՆ ՓՈ. 4
1908



ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ



ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Պէտք է ցանկալ և բոլոր ոյժով ձգտել, որ
մեր հասարակական կեանքը ըստ կարելւոյն շու-
տով մտնի իր բնական ուղին, բայց ոչ ծանծա-
զուտներով և սահանքներով փշացած այն հին
ուղին, որը այնքան թանգաղին կեանքեր է տա-
րել մահուան արիւնոտ ծովս, այլ նորը՝ առանց
սահանքների և ծանծազուտների, որը տանում
է համամարդկային կեանքի, սոցիալական ար-
դարութեան և բաղդի ծովը:

Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ հասա-
րակական տառապանքները բուժելու և նոր հուն
կառուցանելու գործը համաժողովրդական վրա-
տահութեամբ յանձնուած լինի վերջապէս այն-
պիսի անձանց, որոնք զիտեն խնամքով և սի-
րով վերաբերուել հասարակական տառապող օր-

28.357

գ 354 - 60

գանիզմին և հասկանում են այն մեծ խնդիրներն ու նպատակները, որոնց իրականացման այնպիսի ուժգին թափով ձգտում է մեր բազմաշարշար հայրենիքը:

Մեզ անհրաժեշտ է իսկական գեմստվօ, անհրաժեշտ է զեմստվօյական մասը միութիւն . . .

Ներկայում — բիւրոկրատիկ կարգերի, հասարակական հիմնարկութիւնների անինքնուրոյնութեան, կապիտալի ախրապետութեամբ սոցիալական արդարութեան խախտման ժամանակ — ազգաբնակութեան առողջութեան պահպանումը չի կարող հասնել պատշաճ զարգացման և կատարեալ յաջողութեան։ Նման յաջողութեան հասնելը հնարաւոր կըդառնայ միայն այն ժամանակ, եթե առողջապահութեան գործը կըյանձնուի հասարակական հիմնարկութիւնների անկախ հսկողութեան, հիմնարկութիւնների, որոնք վերաշինուած լինեն ռամկավարական լայն սկըրբունքների, կանանց մասնակցութեամբ ընդհանուր ընտրողական իրաւունքի վրայ, հասարակական-սանհիտարական նշանակութիւն ունեցող աշխատանքի և կեանքի պայմանների օրէնսդրական կարգով պաշտպանուելու դէպքում։

Ի նկատի առած տնտեսական ծանր պայմանները և կուլտուրական պայմանների բացակայութիւնը, զեմստվօն մեծ դեր կըկատարէ. Իսկ զեմստվօյական բժշկութեան սկզբունքները

համապատասխանում են մեր կեանքի սոցիալական պայմաններին։

Մեծ կամ փոքր տարածութեան վրայ մեզանում տարէցտարի կրկնւող խրոնիքական սովը, որը հիմքից կործանում է գիւղացիական լայն մասսաները, ուժասպառ է անում նրանց ֆիզիքապէս, սաստիկ մահացութիւն և հիւանդութիւն է առաջ բերում ժողովրդական լայն խաւերի մէջ — անմիջական հետեանք է վարչական-տնտեսական մշտական խնամակալութեան, ժողովրդի իրաւագրկութեան, նրա կուլտուրական զարգացման արհեստական խափանման և դրա հետ շաղկապուած հողային սովի։

Դա հնարաւոր է միայն վերացնել պետական ներկայ կարգի կատարեալ վերանորոգութեամբ, եթե ժողովուրդը լիակատար, լայն և ազատ ինքնուրոյնութեամբ կարող կըլինի զարգացնել կուլտուրական և ժողովրդական տնտեսական իր բոլոր ոյժերը, եթե սա հնար կունենայ հողային հարցը արմատապէս լուծելու յօդուտ գիւղացիութեան աշխատաւոր մասի։

Իսկ ի նկատի առած բանւորների ֆիզիքական և հոգեկան վերաբուժման կարևոր նշանակութիւնը, պէտք է ընդունել, որ պետութեան, հասարակութեան, բանւորների և հէնց իրա, արդիւնագործութեան շահերը պահանջում են, որ բժշկական օգնութիւնը ներկայիս իր բոլոր ձեւերով հասցուի ոչ միայն յատկապէս բանւորնե-

ըին, այլև գործարանային ամբողջ բնակչութեան լիովին գործարանատէրերի հաշուից:

Գործարանային և ձուլարանային (զաւօդի) բանւորների կեանքի ֆիզիքական և հոգեկան կողմերի առողջացումը հնարաւոր է լոկ այն դէպքում, եթե կեանքի մէջ կըմտնի խնամքով մշակուած, բացառապէս աշխատանքը պաշտպանելու սահմանուած գործարանային օրէնսդրութիւն, եթե կ'ոչնչանայ ներկայումս արդիւնագործական ձեռնարկութիւններում տիրող հետամտութեան սիստեմը, եթե բանւորներին կըշնորհուի միութիւնների լայն ազատութիւն և աշխատանքի լաւագոյն պայմանների համար գործօն կռուի հնարաւորութիւն:

Իսկ համաձայն հասարակական-առողջապահական գիտութեան ցուցմունքների և սոցիալ-տնտեսական պահանջների պէտք է անհրաժեշտ համարել թէ՛ արդիւնագործական և թէ գիւղատնտեսական աշխատանքի բոլոր տեսակների և ձեռքի համար ամենաշատը ութժամեայ բանւորական օրուայ սահմանումը:

Մեր կեանքի ամբողջ կազմը պէտք է արմատապէս փոփոխուի, պէտք է միայն բոլոր ոյժով ցանկալ, սրտանց ձգտել: Թող գէթ առայժմ մեր նշանաբանը լինի իսկական, լայն զեմստվօ, զեմստվօյական մանր միութիւն:

Այն ժամանակ կունենանք և գիւղական

հիւանդանոցներ, և՝ գիւղատնտեսական ու տեխնիքական դպրոցներ և թէ կամուրջներ, ճանապարհներ, հողեր ...

Միայն միացած ջանքերով, համերաշխ, միահամուռ աշխատանքով կարելի կըլինի բարձրացնել մեր հիւանդ, խեղճ գիւղը՝ մեր գոյութեան, մեր բարօրութեան հիմքը:

Եւ, հոչակաւոր Պաստերի խօսքերով, ապագան պատկանում է նրան, ով ամենից շատ կըգործէ յօգուտ տառապող մարդու:

ԲԺ. Ա. Բ.

25 Հոկտ. 1907 թ.
Ս.-Պետերբուրգ

Ա.

Ժողովրդական առողջապահութիւնը, ժողովրդական կրթութիւնը, բժշկութիւնը, գպրոցը — ահա այն հիմնաքարը, որի վրայ պէտք է հաստատուի քաղաքակրթութեան և կուլտուրայի հոյակապ շէնքը, առանց որի նա աւազի վրայ կառուցուած — կամ նոյնիսկ թղթեայ տնակ կըլինի՝ ընդունակ կորժանուելու թեթև հպումից:

Տարաբաղդաբար հէնց հիմքը բոլորովին անպէտք է:

Աղքաբճակութեան նշանաւոր մասի առողջութիւնը և լուսաւորութիւնը բոլորովին չեն ապահովւած, գեռ բաւականաչափ հրապարակ չեն հանւած իսկական կրթական և սանիտարական հարցերը, դրանք գեռ առաջնակարգ կարևորութիւն ունեցող ինդիրներ չեն կազմում:

Օրէցօր սուր կերպարանք ստացող գոլութեան կոիւը յետ է մղել մարդկութեան կարդինալ հարցերը:

Զգտումն դէպի գերակշռութիւն և շահ, ուժեղի իրաւունքի իրականացումը լարում են կենսական միջոցները մինչև այն մաքսիմումը (ամե-

նաշատը), որից անց տիրապետում է բարոյական լիակատար սնանկութիւն և ֆիզիքական կատարեալ քայլքայում:

Աղջերի ընդհանուր ընտանիքի մէջ Ուուսաստանը այդ կողմից բացառութիւն չէ կազմում. մեղանումն էլ, ինչպէս և ամենուրեք, միլիտարիզմը (զինուրական գերիշխանութիւն) և կապիտալիզմը տոն են տալիս կեանքին:

Ոչ դպրոցը և ոչ էլ բժշկութիւնն է արժանանում իրան պատշաճ ուշադրութեան:

Այդ գեռ քիչ է. ագիտութեամբ, հսկայաչափ հիւանդառութեամբ և մահացութեամբ կուլտուրական ժողովրդների շարքում Ուուսաստանը առաջնութեան տիսուր պատիւն է վայելում: Բագրի լրագիրներից մէկի խօսքով հայ բանւորը զրագիտութեամբ աւելի ցած է, քան թուրքը:

Մինչդեռ Արեմուտքում իրականացած է արդէն սկզբնական ընդհանուր կրթութեան դադարարը, սանիտարական նպատակայարմար կազմակերպութեամբ նուազեցնում են հիւանդառութիւնն ու մահացութիւնը — մեղանում ընդհանուր կրթութիւնը գեռ հեռաւոր երազ է, մահացութիւնը ոչ միայն չի նուազում, այլ մինչև իսկ աւելանում է:

Ճիշտ է, կրթութեան և առողջապահութեան ծախսերը պետութեան հետ միասին կրում են նաև զեմստվօն, քաղաքները, բայց եթէ ի նկատի առնենք, որ զեմստվօնների և քաղաքների նիւթական միջոցները ոչ միայն մեծ չեն, այլ և տատանւում

են բազմազան պատահականութիւններից և մրսխուում են ուրիշ շատ կարիքների վրայ, այն ժամանակ դպրոցական և բժշկական բիւշէն մի առանձին մեծ գումար չի ներկայացնի:

Ընդհանուր առմամբ բաղաքները քիչ են ժախսում դպրոցի և ժողովրդական առողջապահութեան վրայ. զեմստվօնների նշանակած տուրքի որոշ նորմային վերաբերեալ վերջին օրէնքով զեմստվօնների ալգորինակ ծախսերին պատճէ է կանգնեցրած:

Կայսրութեան կէս մասում չկան զեմստվօնական հիմնարկութիւններ. ժողովրդական առողջապահութիւնը և ժողովրդական կրթութիւնը պահպանում են լոկ պետական համեստ նպաստներով:

Տարրական կրթութեան վրայ Ուուսաստանում ծախսում է միջին թւով տասն անգամ պակաս, քան Գերմանիայում, ինն անգամ պակաս քան Ֆրանսիայում, հինգ անգամ պակաս, քան Աւստրիայում և երեք անգամ պակաս, քան աղքատ Իտալիայում:

Ինչպէս պէտք է սպասել, բիւշէի աննշանութեան համապատասխանում է նաև իսկական իրականութիւնը իր անհաւատալի տգիտութեամբ, հանրածաւալ անգրագիտութեամբ, հիւանդութեան և մահացութեան բարձր տոկոսով՝ բարձրածայն աղաղակող այդ կարիքներով:

Մեղանում դպրոց է յանախում դպրոցական հասակի տղաների միայն $\frac{1}{4}$ մասը, $\frac{3}{4}$ դուրսն է մնում. մի գիտնականի հաշով Ուուսաստանը կա-

ըող է գրագէտ դառնալ միայն 250 տարուց լեռ, այն էլ տարեկան 3250 նոր դպրոց բանալու դէպօւմ։ Այս հաշիւր հին է և մօտ 15 տարի առաջ է կատարուած, բայց մեր օրերումն ևս պահպանել է իր նշանակութիւնը։

Ճիշտ է, այդ ժամանակից ի վեր դպրոցների թիւր բազմացել է, բայց դրա հետ միասին, բազմացել է նաև ազգաբնակութիւնը. բացի այդ, հազարաւորների փոխարէն դպրոցները հարիւրներով են միայն բացւում, այնպէս որ ընդհանուր գրադիտութեան ժամանակը հազիւր թէ քիչ թէ շատ մօտեցած լինի, եթէ ոչ աւելի ևս յետ գնացած։

Բ.

Ազգաբնակչական մասսայի կեանքի պայմանները սանհիտարական տեսակէտից ամէնաթուլ քննադատութեան անդամ չեն դիմանում. ժողովրդական առողջապահութեան հիմքը փորում են բազմաթիւ և չափաղանց ալազան դործօններ։

Դրանց մէջ առաջին տեղը պէտք է շնորհել ազգաբնակութեան տնտեսական անապահովութեան, որը թերակերութեան, կիսաբաղցութեան է հասնում. մի քանի ցուցմունքների համաձայն ուուսը սնունդի նորմալ չափից $31^{\circ}/_0$ պակաս է ուտում։

Հիմք չունենք կարծելու, թէ հացի պակասութիւնը ծածկւում է մսով, կաթով. դա հազւագիւտ ուտելիք է, ասում է Լոխտին յալտնի

զիւղատնտեսը, այն էլ որտեղից ճարել, երբ տընտեսութիւնների $35^{\circ}/_0$ ոչ մի կով չունի. իսկ $25^{\circ}/_0$ չունի ոչ մի անասուն։

Թերակերութիւնից թուլացած օրգանիզմը մի առանձին հակումն է ցոյց տալիս դէպի ալլեալ հիւանդութիւնները, մանաւանդ տարափոխիկները և հեշտութեամբ դոհ է դնում նրանց. դրանից բղխում է աշխատանքի բնդունակութեան թուլացում, զօրեղ մահացութիւն։

Ազգաբնակութեան տնտեսական անապահովութեան կարեւորութեան մասին — իբրև հիւանդութեան և մահացութեան դործօնի — Պիրոզովի անուան նուիրուած համաժողովը իրաւացի կերպով հետեւեալ բանաձեր հանեց։

«Դրա, այսինքն թերակերութեան պատճառով, բժշկա-առողջապահական բոլոր միջոցները կորցնում են իրանց հիմքն ու նշանակութիւնը. դործողութիւնների կանոնաւորութիւնն և նպատակայարմարութիւնը խափանում է և դրա հետեւանքն է լինում բժշկա-սանիտարական դործի զարգացման կատարեալ անհնարաւորութիւնը»։

Ի՞նչ նշանակութիւն ունեն հիւանդանոցներն ու բուժարանները իրանց մահիններով և դեղերով, երբ ժողովրդին ոչ թէ գեղափոշիներ և միկստուրներ է հարկաւոր, այլ հաց. ի՞նչ նշանակութիւն ունեն սանհիտարական ծեռնարկութիւնները և տարափոխիկ հիւանդութիւնների դէմ կռուելը, երբ բնակչութիւնը զուրկ է ամենապլիսաւոր պէտքերից՝

կերակուրից, շորեղէնից և չոր բնակարանից, անկիւնից:

Իրաւունք վերապահելով մեղ յետագալում վերադառնալու աղջաբնակութեան տնտեսական անապահովութեան և մահացութեան միջև գոյութիւն ունեցող առնչութեան խնդրին, անցնենք ժողովրդական առողջութիւնը բայբալոյ այլ գործօններին և մասնաւորապէս բնակավայրերի ապականուածութեան ու կեղտոտ պահպանման:

¶.

Մեր սանիտարական իրականութիւնը ներկայացնում է չափազանց տխուր և մռայլ պատկեր, որը միայն կարելի է երևակայել:

Բնակավայրերը թաղուած են ցեխի և փոշումէջ, որևէ տեղ մաքրելը հնարաւոր է, միայն հիմքից փորելով. քաղաքների մեծամասնութիւնը, իր շէնքերի սահմանագծում կամ նրանից մէկ-երկու հարիւր քայլ հեռաւորութեամբ շինելով աղրիւսները, խեղդում է իր սեփական կեղտի մէջ:

Գետերը և գետակները յաճախ կոյուղիների տեղ են ծառայում, հէնց դրանց չուրն էլ գործ է ածւում խմելու, լուացքի և այն. առհասարակ, ասում է պրոֆ. Եացուկովիչը, մեր գետերը ապականուած են այնպէս, ինչպէս ոչ մի տեղ, Եւրոպայում չկայ մի գետ, որը ապականուածութեան կողմից հաւասար լինի տեղական գետերից մէկին: Առուսովում, քաղաքի միջով հոսող գետակը ընդ-

հանուր կոյուղու տեղ է ծառայում քաղաքային ամենատեսակ կեղտոտութիւնների համար: Ներքին գործոց նախարարութեան բժշկական գեղարտամենտի տեղեկութիւնների համաձայն լաւ չուր են գործածում — գէթ համի և արտաքինի կողմից — 600 քաղաքից 10%: 285 քաղաքում չուրը ուղղակի անբաւարար է. մինչև իսկ Պետերբուրգն ու Մոսկվան չունեն լիովին բաւարար չուր: Միայն 278 քաղաքում կայ արտաքնոց և աղտահոր՝ հաշւած նաև ամենահին, նահապետական ծեով շինածները:

Միայն 74 քաղաքում կայ հասարակական սպանդանոց. միւսներում գոյութիւն ունեն կամ մասնաւոր սպանդանոցներ, որոնք կեղտոտ են պահւում, կամ բոլորովին չկան և տաւարը ուղղակի բակումն են մորթում, իսկ կեղտոտութիւնները կամ փողոց են նետում կամ բանչարանոց:

Ահազին քանակութեամբ քաղաքներ սալայտակ չունեն. գարնանը այդ փողոցները դառնում են բակերից զուրս հոսող գարշահոտ հեղուկների զտիչ որտեղ աղատօրէն շրջագայում են զանազան աւելցուկներ, նեխուում են տնալին կենդանիների և թռչունների դիակներ: Ամառը այդ բոլորը չորանալով, ամենուրեք թափանցաղ աղբային փոշու ձեռվ մտնում է մեր թէ՛ բերանը և թէ աչքը, ներս է մտնում բնակարանները, ծածկում է մսեղէնը, յաղեցնում է օղը, ներծծւում է շորերի մէջ — մի խօսքով ոտից ցպլուխ պատում է քաղաքը և նրա բնակիչներին:

Արտաքին հակասանիտարականութեան հետ
միասին, բնակարանների նեղուածքութիւնն և հա-
կասոռզապահականութիւնը՝ մանաւանդ կենարո-
նավայրերում, ամենահամարձակ և ամենալոռետես
երևակայութիւնից անգամ անցնում են:

Ուսւաստանում ամեն մի տանը միջին թւով
9-ից մինչև 13 հոգի է բնկնում. և դա ոչ մեծ
քաղաքներում: Խակ մեծ քաղաքներում բնակչու-
թիւնը աւելի խիտ է, քան Արևմտեան Եւրոպակի
նոյնանման քաղաքներում. այսպէս, Պետերբուր-
գում 1895 թուականին իւրաքանչիւր տանը բն-
կնում էր մօտ հարիւր հոգի, մինչդեռ Բերլինում՝
61, Վիեննայում՝ 58, Պարիզում՝ 33, Լոնդոնում՝
8 հոգի: Պետերբուրգում բնակարանների 45%
կամ մօտ կէսն է գերլցուած, Մոսկայում 30%,
Պարիզում 15%, Վիեննայում և Բերլինում 20%:

Վարշաւակում 30 հազար հոգի ալյափիսի բնա-
կարաններում է ապրում, որտեղ խելացի տան-
տէրը փայտ անգամ չի պահի: Պետերբուրգի բան-
տրական բնակարաններում մի հոգուն հասնում է
միջին թւով ուղիղ 6—8 խորանարդ արշին օդ և
իշնում է մինչև մէկ-երկու արշին՝ ընդդէմ նորմալ
25 արշինի:

Բացի սենեակներից, բնակիչները խոնուած են
խաւար և զուսաւորուած միջանցքների, նախասե-
նեակների և խոհանոցների մէջ:

Իրար բոլորովին անձանօթ մարդիկ պատս-
պարում են մի փոքրիկ տարածութեան վրայ,
միենոյն սենեակում. առողջ, զգաստ մէկը բնում է

մշտապէս արբած, խելառ, հիւանդ ծերունու հետ
միենոյն մահճակալի վրայ կամ փալասավաճառի
հետ միասին, որը պառկում է առանց իր թաց և
գարշահոտ ցնցոտիները հանելու:

Սարսափելի պատկեր են ներկայացնում գի-
շերանցները. գիշերողները քնում են տախտերի
վրան, տակը, զրանց անցըերում, մէջերը, կողը-
կողքի, այնքան, որքան կրտեղաւորուեն: Օդը լրց-
ում է զգուելի գարշահոտութեամբ, լիքն են փա-
ռարանների շուրջը ցամաքող թաց և հոտած փա-
լասներ:

Անթիւ մարդիկ շուռ ու մուռ են զալիս ամ-
բողջ գիշերը իրանց կեղտոտ տախտերի վրայ՝ ա-
ռանց հանգստութիւն և քուն գտնելու, շնորհիւ
այն հանգամանքի, որ անհնար է դառնում շունչ
քաշել ահազին քանակութեամբ ածխաթթուի
պատճառով, որը խառնուած է լինում գիշերողների
մարմնից և շորերից բարձրացող զոլորշու թունա-
ւոր արտադրութիւններով:

Նրանք զէն են զցում իրանց վրայից շորերը,
ցնցոտիները, շապիկը և բոլորովին մերկ են մնում,
յուսալով զէթ ալդպիսով թեթեացնել շնչահեղձու-
թեան տանչող զգացմունքը և շնչառութիւնը
թեթեացնել. բայց զրանից, ի հարկէ, ոչնչ չի
դուրս գալիս:

Ռոպէապէս ծագում է զովութեան խաբու-
սիկ զգացմունքը, բայց այնուամենայնիւ շնչելը
անհնար է լինում. և ահա ամբողջ գիշերը շուռ ու
մուռ է զալիս գժրազդ գիշերովը իր կեղտոտ տախ-

տի վրայ, որտեղ վխտում են լուերը և ուրիշ միշտներ։

Թարմ անձնաւորութիւնը անկարող է այդպիսի բնակարանում տաս-տասնեհինգ րոպէից աւելի մնալ՝ սկսում է սիրտը խառնել, փսխել, մինչև իսկ ուշաթափ է լինում։

Ամօթ է ասել, որ ոչ Մոսկւայում, ոչ էլ Պետերբուրգում զրեթէ չի կազմուած չունեորների բնակարանային հակասանիտար պայմանների դէմ անհրաժեշտօրէն մզուելիք կռուի նախագիծ, թէև Մոսկւայում Սոլոգովնիկովը ն միլիոն է նուիրել։

Այն ինչ ազգաբնակութեան առողջացման հոգսը չի կարող զգալի արդիւնք ունենալ, քանի դեռ տասնեակ հազարաւոր բանւորներ կազրեն այնպիսի պայմաններում, որոնք բացասում են ամեն մի հասկացողութիւն առողջապահութեան մասին, սպանում են առողջ օրգանիզմը, քանի դեռ շատ բնակարաններ բազմաւեսակ տարափոխիկ հիւանդութիւնների բունն են կազմում. որքան խիտ ապրի ազգաբնակութիւնը, այնքան բարձր կրինի մահացութիւնը։

Դ.

Ցեղերի թուլացման լուրջ պատճառը, թուլացման, որը ուղեկից է մեծածաւալ հիւանդութեան և մահացութեան, կանանց կեանքի և առողջութեան պայմանների անբարելաչողութիւնն է։

զրա շնորհիւ կինը հնարաւորութիւն չունի իւր օրգանիզմի բնական առանձնայատկութիւնները հաշուի առնելու։

Քաղաքում ապրող ապահովուած կնոջ առողջութեան և կեանքի պայմաններին։

Ինսելիզենտ կինը, իբրև մալր և տնտեսուհի, ունի աշխատանքի նեղ շրջան, և հէնց այդ շրջանումն էլ գործակից ունի յանձին աղախնի. սակայն կանանց մեծամասնութիւնը այդ շրջանում անդամ չի կանգնած իր սրբազն կոչման բարձրութեան վրայ՝ երեխայ ունեցող ամեն կին չի կարող մալր կոչուել։

Գործակիցների բացակալութեան դէպումն անդամ մալրական և տնտեսական պարտականութիւնները յանախ չեն սպառում կնոջ ամբողջ ժամանակը, առաւել ևս զանազան տեսակ աղախներ ունենալու դէպօւմն։

Դրանից ծագում է ինսելիզենտ կնոջ կատարեալ պարապութիւնը, որը յաճախ ամեն տեսակ աշխատանքից և պարտականութիւնից ազատ լինելու կերպարանքն ունի. դրանից էլ առաջ է գալիս տաղտկութիւն, ծգտումն դէպի զուարճութիւններ, զարգեր, սիրախաղ և խելացի ու օգտակար գործունեութեան երևութական, արտաքին կողմերը։ Դրանից, մասամբ էլ տնտեսական պայմանների շնորհիւ, ծագում է կուիւ աշխատանքի

իրաւունքի համար այն ասպարէղներում, որտեղ
աշխատում է տղամարդը:

Բոլորովին այլ պատկեր է ներկայացնում
կնոջ դրութիւնը գիւղում, որտեղ, ալսպէս կոչուած,
կանանց հարցը ոչ թէ աշխատանքի իրաւունքին է
վերաբերում, այլ դրա չափազանց ժանր լուծին:

Տղայաբերութիւնից լետոյ երեխալին սնուցա-
նելով և նրան զրագեցնելով, ուտելիք պատրաս-
տելով, շորեր կարելով, բանջարանոցը և տաւարի
մեծ մասը խնամելով հանդերձ, կինը դրա հետ
միաժամանակ մարդուց ոչ պակաս (Ռուսաստա-
նում) աշխատում է նաև դաշտում՝ հնձում է, կալ-
սում և այլն:

Ընդհանուր առմամբ նրա ուսին աւելի է
ծանրացած աշխատանքի բեռը, քան տղամարդու:

Վերջինս էլ է, ի հարկէ, աշխատում, բայց
նրա աշխատանքի ամենատաք ժամանակը նրան
օգնում, նրա հետ կողք-կողքի աշխատում է նաև
կինը, աղջիկը, հարսր. իսկ վերջիններին ով է օգ-
նում տարին տասներկու ամիս տնալին տնտեսու-
թիւնը կառավարելու, կովերը կթելու, ամբողջ
դիշերները երեխաներին խնամելու:

Գիւղացին ծմեռը քիչ թէ շատ հանգստանում
է, իսկ գեղչկուհուն ալդ հանգստութիւնն էլ չի
տալիս տնալին տնտեսութիւնը: Չմեռը, ինչպէս և
ամառը, պէտք է երեխաներին խնամել, կերակուր
եփել, տաւարը խնամել, և բացի ալդ՝ մանել, դոր-
ձել, կարել:

Կինը լղիութեան ժամանակամիջոցում անդամ

հանգստութիւն չունի. յդի կինն էլ նոյն դիշեր-ցե-
րեկ անփոփոխ, մշտապէս աշխատող բանւորուհին
է, ինչպէս և ոչ լղին: Վայ նրան, եթէ լղութեան
ժամանակաշրջանը քիչ ծգծուի և եթէ շրջապա-
տողների կարծիքով նրան օգնութիւն է հարկաւոր:

Մարդու մազերը բիզ-բիզ են կանգնում, երբ
ծանօթանում է այն բազմատեսակ չարչարանքնե-
րի հետ, որոնց ենթարկում են ծննդականին՝ նրան
օգնելու դիտաւորութեամբ. կախ են անում, թափ
են տալիս, հուապ են տալիս և ուրիշ ինչե՞ր չեն
անում խեղճին:

Ծննդականը յանախ տղաբերքի հէնց հետե-
ւեալ օրը ոտի է ելնում, երրորդ կամ չորրորդ օրը
նորից ծեռնամուխ է լինում տնալին աշխատանքի.
զարմանալի չէ, որ այդպիսի պայմաններում գիւ-
ղացի աղջկայ մարդու գնալը սկիզբն է դառնում
տանջանքների և հիւանդութիւնների:

Համաձայն կնոջ բացառապէս իբրև բանւոր
ոյժ ընդունուած լինելուն, ամուսնութիւնն էլ
գիւղում լոկ աշխատանքի պայմանագրութիւն է
ներկայացնում. ամուսնանալ — կնշանակէ վերցնել
նոր բանւորուհի:

Այս է ահա կնոջ վիճակը. և այդպիսի վիճա-
կը տեղ չունի առողջապահութեան հոգսերի հա-
մար, ինչ զրանց ժամանակն է, երբ «գլխի մազե-
րից շատ գործ կալ անելու»:

Եւ զարմանալի չէ, որ գեղեցկութիւնն ու երի-
տասարդութիւնը բնութեան վաղանցուկ պարզեն է
դառնում. կոպիտ և ծանր աշխատանքից կինը դեռ

չաղկած թառամում է, և երբեմն ի աշխոյժով ու կենդանութեամբ կրակոտ դէմքին բութ համբերութեան և անմիտ երկիւղի յաւիտենական կնիքն է զրոշմում:

Եինելով աւելի թոյլ, քան տղամարդք, բայց վերջինիցս շատ աշխատելով ու ենթարկուելով մի շաբք ծանր, գժուար բուժելի, երկարածիդ տանջանքների, որոնք տղամարդուն անձանօթ են — դիւղացի կինը մինչև յատակն է պարպում կեանքի դառնութեան բաժակը:

Եւ շնորհիւ բժշկական օդնութեան բայց կայութեան, հիւանդութեան գրեթէ բոլոր սուր ձեւերը խրոնիքական են դառնում — ընդմիշտ, ամբողջ կեանքում:

Առողջութիւնը աւելի ու աւելի է քայլքայւում, բոլորովին կորչում է աշխատանքի ընդունակութիւնը, որի պատճառով կինը ապրում է իրենին վալիդ, տանջուելով ցաւերից և շրջապատղների կշտամբանքներից, թէ «ծրի հաց է ուտում»:

Մարդն ու նրա ազգականները խորշում են հիւանդ կնոշից, աղատուելու միջոցների մէջ տարերութիւն չդնելով և այդ հողի վրայ սակաւարերութիւն չեն դիւղում ընտանեկան գժտութիւններ և յանցագործութիւններ:

Գիւղացի կանանց հետ համանման պայմանների մէջ են գանուում գործարանալին և արդիւնագործական հիմնարկութիւններում աշխատող կանալք:

Կնոջ առողջութիւնն է կաղմում ընդհանրապէս առողջութեան զրաւականը:

Ինքն ըստ ինքեան աղղաբնակութեան կէս մասը կազմելով, կինը ուղղակի և անխուսափելիքէն աղբում է մարդկային ընտանիքի նորածին անդամների վրայ: Առողջ սերունդը միայն առողջ մօրից կարող է յառաջանալ, չխօսելով հօր առողջութեան մասին: Զեն կարող երեխաների վրայ չանդրագառնալ մօր յղիութեան պայմանները, տղաբերքը շրջապատող պարագաները, իսկ յետոյ արդէն երեխայի կեանքն ու առողջութիւնը զրեթէ ամբողջովին կախուած է այն հանդամանքից, թէ մալրը նրան ի՞ր կաթով է մնուցանում, թէ՞ ո՞չ ի՞նչպէս է այդ կաթը և բաւական է:

Կնոջ կեանքի պայմանները, այսպէս ասած, նախորոշում են երեխայի վիճակը. Ծնուելով այնպիսի անբարեխաչող պայմաններում, ինչպէս վերենկարագրուածները, երեխաները իրանց կեանքի հէնց առաջին րոպէններից սկսում են տանջուել խնամատարութեան թերութիւններից: Օրինակների համար կարիք չկայ հեռուն գնալու, վերցնենք հէնց հռչակաւոր ծծակը (СОСКА):

Նորածիններին սովորաբար ծծակ է տրւում, այսինքն՝ փալասի մէջ փաթաթած ծամած հաց՝ երբեմն աւելացրած զազար և դդում: 4—5 ամսական երեխային ծամելիքի ձեւով տալիս են այն ամենը, ինչ որ հասակաւորներն են ուտում, իսկ պաս օրերին էլ կաթ չեն տալիս:

Երեխային ուտելիք են տալիս նաև կովի եղ-

շիւրից, որը գրեթէ ամբողջ օրը նրա բերանին է, եղուրից, որը, ի հարկէ, չեն լուանում, ամբողջապէս կեղտոտ է լինում, շուրջը վխտում են ճանճերը, և ապականուած կաթը իրրե թոյն երեխալի ստամոքսն է զնում. չպէտք է նաև մոռանալ, որ մայրը և շրջապատողները այդ բոլորը առատօրէն թքոտում են:

Զարմանալի չէ, որ այդպիսի պայմաններում երեխաները ճանթի նման կոտորւում են. Էլ չասենք վարակիչ հիւանդութիւնների մասին (կարձրուկ, քութէշ, դիֆտերիտ):

Ե.

Եթէ գիւղացի երեխաների կեանքին և առողջութեանը մանկական հասակումն է վտանգ սպառնում, քաղաքացիներինը այդ վտանգին ենթարկւում է պատանեկական հասակում՝ դպրոցական կեանքի ժամանակաշրջանում:

Ներկայումս բազմաթիւ փաստեր են հաւաքւած, որոնք տարակոյս չեն թովնում, թէ դպրոցների վնասասակար ազդեցութիւնը (շնորհիւ դպրոցական առողջապահութեան կատարեալ բացակայութեան *) սպառնական չափեր է ընդունել:

Դուքս է գալիս, որ դպրոցական վատ պայմանները ճնշում և ալլանդակում են բոլոր օրգանների գործառնութիւնը, օրինակ՝ աչքինը:

*) Տե՛ս իմ «Նուէր հայ վարժապետին» գրքուկը.

Բժ. Ռէլիսը, երկու անգամ քննելով թիֆլիզի աշակերտներին հինգ տարի ժամանակամիջոցով, առաջին անգամին նրանց մէջ գտել է 25% կարճատեսներ, իսկ երկրորդ անգամին՝ 50%:

Փոքրանում է սրաի խուռոչը, որը պարարտ հող է ներկայացնում թոքալին հիւանդութիւնների զարգացման:

Բացի այդ, երկու սեռն էլ ենթարկւում է քթի սովորական արիւնհոսութեան, առաջ է գալիս մարսողութեան խանգարում, ախորժակի բացակալութիւն, ողնաշարի կորացում, սակաւարիւնութիւն, գլխացաւ, գլխապայտ և այլն:

Սովորով օրուայ կէսը անց է կացնում նեղուածք, վատ հողմահարուած սենեակներում, խեղուելով օդի պակասութիւնից. և 12 տարեկան դպրոցականի վրալ $\frac{1}{4}$ տարի տևող հասարակ աշխատանքն անգամ, ասում է պրոֆ. Կրեպենիկը, յոզնածութեան նշաններ է դրոշմում, որովհետեւ շատ կարճատե դասամիջոցներով ընդհատող բազմաժամ պարապմունքը կատարեալ ուժասպառութեան է տանում:

Միւս կողմից, այնպիսի անբարեխաչող պայմաններով հանդերձ, ինչպէս շարժողութեան բացակալութիւնը և ապականուած օդի ներշնչումն է, վատ դպրոցը ներկայացնում է ծանր զգացողութիւնների և ճնշող հոգեկան շարժումների մի վալր:

Իւրաքանչիւր դպրոցական անձնական փորձով իմանալիս կըլինի, թէ որքան յուղմունքներ, հոգս

և վրդովմունք է կրում մարդ դպրոցական կեանքում, որոնք բոլորովին թունաւորում են կեանքի ոսկէշրջանը:

Զծանրանանք քննութիւնների վրայ, դրանց վնասակարութեան մասին այլևս չեն վիճում. վերցնենք սովորական պարապմունքի ժամանակաշրջանը:

Ո՞ւմ բաղդաւոր օրը չի թունաւորուել դժուար դասի մտքով, ո՞ւմ չի պատահել զարթնել սիրտ ճմլող զգացմունքով, թէ այսօր «կրհարէնեն»:

Նախաճաշը միան էլ չի գալիս, ախորժակը փակւում է, շտապ կուլ տալով մի բաժակ ամբակ թէյ, երեխան վազ է տալիս գիմնազիա և որքան մօտենում է դասի ժամը, այնքան ցաւադին է ճմլում նրա սիրտը:

Դասը սկսում է. ուսուցիչը բաց է անում մատեանք. դուրս կանչուած աշակերտի ծախը ալլայլում է յուզմունքից, լիշտութիւնը դաւաճանում է, ըմբռնողութիւնը կորչում, ճակատին քրտտինք է ցայտում, ոտն ու ծեռք դողդողում . . .

Տարաբաղդաբար այդ, կարելի է ասել, սովորական թուուցիկ պատկերները առանց աղդեցութեան՝ այն էլ լուրջ աղդեցութեան չեն մնում առողջութեան վրայ:

Այնպիսի հոգեկան շարժումներ, ինչպէս երկիւղը, հոգուր, վիշտը, խանգարելով արեան շրջանառութեան կանոնաւորութիւնը, աղբիւր են դառնում ծանր հիւանդութիւնների և անխուսափելիութիւնը կարճում են նոյնիսկ կեանքը:

Ո՞չ, հիմնովին պէտք է փոխել մեր կեանքի

եղանակը, պէտք է լայնօրէն և լիովին օդառուել զէթ տարրական դպրոցական առողջապահութիւնից:

Թո՞ղ շաբաթական մի անգամ զոնէ խորհրդակցութիւններ սարքեն դասատունները ծնողների հետ, որպէսզի դպրոցը իսկական օգնութիւն ցոյց տայ ընտանիքին և ընդհակառակը. մեր մատադ դրացը պէտք է լայնածաւալ լուսաւորութեան իսկական բուրաստանը դառնայ մեր վալրենի և անքաղաքակիրթ հասարակութեան մէջ. մեղ կործանում են կուսակցական կրեերը և անծնական շահերը:

Զ.

Զափաղանց անբարելաչող աղդեցութիւն են զործում աղջաբնակութեան առողջութեան վրայ դործարանա-ծուլաբանալին բանւորութեան կեանքի և աշխատանքի պայմանները, բանւորութեան, որի թիւը արագօրէն անում է:

Ձեռնարկուների ի՞նչ հոգսն է խեղճ բանւորի առողջութիւնը, մինչև իսկ նրա կեանքը:

Սշխատանքի առաջարկութիւնը զգայի չափով գերազանցում է սպառողութիւնը և գործատունները օդառում են իրանց դրութեան շահաւետութիւնից, իւրացնելով այն հայեացըր, թէ բանւորը կենդանի մերենայ է, որը վերանորոգութիւն չի պահանջում և արհեստականից շատ աւելի էժան է:

Կոպիտ, եսական և անզգայ վերաբերմունքը դէպի բանւորի շահերը, որը բնորոշում է ձեռնար-

կողին, թափանցում է նաև տեխնիկալի մէջ. արդիւնքի էժանացման և կատարելազործման հոգսերը մոռացնել են տալիս նրան բանւորի կեանքի և առողջութեան պայմանների հոգսը:

Սանիտարական բժիշկների հաշւետւութիւնը — ոչ թէ գաւառական յէտ ընկած մի զեմստվօյի, այլ Պետերբուրգի զեմստվօյի բժիշկներինը — ալպիսի փաստեր է, օրինակ, երեան հանում:

Յարսկօյէ Սելօ գաւառի կրային մի գործարանի հարիւր բանւոր խոնուած են սարսափելի նեղուածք, հոտած, կեղառու և խաւար յարկասենեակում, որտեղ ոչ մի տախտ, ոչ մի օդափոխութիւն չկայ:

Ահա մի ուրիշ սարսափելի օրինակ դրաթուղթի գործարանի իրականութիւնից:

Բազմատեսակ թուղթ պատրաստելու նիւթ են կազմում ամենակեղտու իրերը, ինչպիսին միայն կարելի է երեակալել՝ աղտահորերից և արտաքնոյներից հանած հին փալասները, թոքախտաւորների, տիֆաւորների և փարակիչ հիւանդների անպէտը և զգուելիութեան չափ կեղտոտուած սպիտակեղէնը, պանդոկների ապականուած թրթերի կտորտանքը, հիւանդանոյների հին թղթերը:

Սոյլ բոլոր հնոտիները Պետերբուրգից կառքերով տանում են գործարան, որտեղ տասնեակ ձեռքեր նախապէս ջոկում են փոշոտ մթնոլորդում:

Տեսակների բաժանելուց յետով գցում են մեքենալի մէջ, որտեղ այդ նիւթը չոր դրութեամբ

կտրատւում է, մանրացւում և մաղւում. արտադրութեան այդ երկու մոմենտին ուղեկցում է ահազին քանակութեամբ բարձրացող փոշին:

Անտարակուսելի է, որ բանւորների թոքախտով հիւանդանալու յանախակի դէպքերն և վարսկիչ հիւանդութիւնների բոլորովին անսպասելի դարձացումը ալդպիսի գործարանների շրջակալքում անմիշակուն հիւանդնք է արտադրութեան սանիտարական վատ պորադաների, նախազգուշացուցիչ գործիքների անխնամ պահպանման:

Բայց այդ, բանւորները հնարաւորութիւն չունեն իրանց պահպաներու վնասակար և վտանգաւոր փոշուց, որովհետև գործարանները չունեն ոչ լուացարաններ, ոչ եկող բանւորների համար շորեր հանելու սենեակներ, ոչ խալաթներ, որոնք հագած աշխատել կարողանալին:

Նովոլագոս գաւառի ատաղծասղոցարաններում բանւորները ոչ միայն խիտ առ խիտ են քնում, այլև շուռ գալու հնար չփ լինում, և ոչ ինչպէս պառկեց, այնպէս էլ պէտք է պառկած մնայ:

Տորֆի հանքերում բանւորները ստիպուած են ամբողջ ժամանակ մինչև գտակատեղը նեխուած և զգուելի միազմներով լցուած չըի ու տղմի մէջ աշխատել: Աշխատանքը սկսւում է առաւօտեան ժամի երեքին և վերջանում է երեկոյեան իննին. հանգստութեան և ճաշի համար արւում է մի ժամ:

Ճահճալին տենդով բանուած բանւորը սարսափելի տպաւորութիւն է գործում:

Նրան տանջում է ծարաւը, սարսուռն ու տապը. մարմինը ամբողջովին ցաւում է և ծեռները կոտրատում. նրանք ստիպւած են օրական մի քանի հարիւր պուդ հեղուկանման տիղմ փոխադրել:

Այդ խեղճ բանւորները բնակւում են հէնց այդաեղ, նահնի վրայ կառուցուած խաւար խուցերում, քնում են յատակի վրայ, փտած տախտակների վրայ, որոնց նեղքուածքներից հեղուկ ցեխ է թափանցում:

Ո՞չ մի բժշկական հսկողութիւն չկայ, և որովհետեւ բանւորները քնում են կողք-կողքի, ուստի շատ լաճախ է պատահում առողջներին հիւանդների հետ քնել և ամառուալ վերջը այլևս ոչ մի առողջ չի մնում:

Բանւորների խմած չուրը, մինչև իսկ եռացրած ձեռի, զզուելի է, նրանով պատրաստած թէլը նեխուած և գարշելի համ է տալիս. բաղանիքներ չկան և ամառուալ վերջերին բանւորների ամբողջ մարմինը խոցերով և կեղերով է ծածկուած լինում:

Դրանից ոչ պակաս, եթէ ոչ աւելի ծանր են շաքարագործարանների աշխատանքի պայմանները. մի քանի բաժանմունքների տաքութեան բարձրագոյն ասախմանը հասնում է մինչև + 55 R., օղը չագեցած է լինում ալլեաց թունաւոր գոլորշիներով, օրինակ՝ ծծմբաշրածնով:

Ընդհանրապէս կարելի է ասել, որ միլիոնաւոր բանւորների կեանքն ու աշխատանքը ամբողջովին մի մարտիրոսադրութիւն է ներկայացնում.

Ֆիայն առողջութիւնը չէ, որ տուժում է. կեանքն էլ է խորտակւում ... Բաղւի բանւորների մասին մանրամասն խօսուած է իմ «Ո՞վ է յանցաւոր» պրքոյկի մէջ:

Զարմանալու տեղիք է տալիս ոչ թէ այն հանգամանքը, թէ արդիւնագործական աշխատանքը հիւանդութիւններ է առաջացնում, փոքրացնում է հասակը և կրծքի խոռոչը, կարծում կեանքը, յանախ պայմանաւորում է մահը — այլ մարդկային դիմացկունութեան և յարմարուելու ընդունակութեան ոյժը, որի շնորհիւ մարդիկ, վերոյիշեալ պայմաններում անգամ ապրելով, միասմանակ պահպանում են իրանց կեանքն և աշխատանքի ընդունակութիւնը:

Եթէ դրան աւելացնենք նաև այն, որ բանւորները, գտնուելով նմանօրինակ պայմաններում, զուրկ են բժշկական օգնութիւնից, վերջնականապէս կրպարզուի միլիոնաւոր մարդկանց կեանքի և առողջութեան կատարեալ անապահովութիւնը, հասկանալի կրպառնալ բանւորական այդ մարտիրոսագրութիւնը:

Մրանից հինգ տարի առաջ Պետերբուրգի նահանգում քննուած 65 արդիւնագործական հիմնարկութիւններից տասներկուոր միայն ունէին բժիշկներ, ֆելզշերներ և հիւանդանոցներ:

Մոսկուայի նահանգում գաւառական մի բժիշկ 32 գործարանի վերահսկիչ էր. 40 շաքարագործարան չեն հրաւիրում նոյնիսկ տարէնը մի անգամ եկող բժշկին և բաւականանում են լոկ

ֆելդշերի հասցրած օգնութեամբ. Վարշաւայի ոչ
մի զործարան չունի ոչ մշտական բժիշկ, ոչ ֆելդ-
շեր և ոչ հիւանդանոյ:

Բանտորների համար բժշկական օգնութիւնը
գոյութիւն ունի միայն թղթի վրայ և հանդուր-
ժելի է իբրև անխուսափելի չարիք. դրա հետեանքը
այն է լինում, որ զործարանային բնակչութիւնը
մեռնում է $40:1000$ համեմատութեամբ, մինչեռ
քաղաքայինը, օրինակ Վարշաւյում՝ $18:1000$
եթէ ալդպիսէ պատկեր է ներկայացնում զործը
մեծ քաղաքներում և մայրաքաղաքներում, որտեղ
յատուկ զործարանային հսկողութիւն է սահման-
ած, զժուար չէ երևակայել, թէ ի՞նչ է կատար-
ում ծալրագաւառներում և առհասարակ այն
տեղերում, որտեղ ոչ մի հսկողութիւն չկար:

Ե.

Գործարանա - ծուլարանային բանտորութեան
հասցուելիք բժշկական օգնութեան անապահովու-
թիւնը բացառութիւն չի կազմում աղքարնակու-
թեան ամբողջ մասսայի նկատմամբ, որը էապէս
նոյն իսկ աւելի է անօդնական:

Դոկտոր Հերցենշտէնի ասելով, կուլտուրական
տասը պետութիւնների մէջ բժիշկների թուի տե-
սակէտից Ռուսաստանը վերջին տեղն է բռնում.
այդ կողմից Անդիալին հասնելու համար Ռուսաս-
տանը պէտք է 50.250 բժիշկ ևս ունենալ:

Բայց այդ, բժիշկների քանակը Ռուսաստա-

նում շատ թերի է տարրաժանուած, չափազանց
անհամաչափ:

Բժիշկների 50% ապրում է մայրաքաղաքնե-
րում և նահանգական քաղաքներում. գաւառական
քաղաքներում՝ 25% և $10-15\%$ միայն ընկնում
է զիւղերին:

1900 թուականի վիճակազրութեամբ բոլոր
13.000 բժիշկներից մէկը ընկնում է 30.000 բնակչի
1.800 քառակուսի վերստի վրայ, և դա զեմստվո
ունեցող նահանգներում. մնացած նահանգներում
այդ թուերը բարձրանում են հարիւր հաղար բնակ-
չի և 9.000 քառ. վերստի:

Այս տարի Մասկովյում Պիրոգովի լիշատակին
գումարուած համաժողովրում շատ խօսուեց նաև
մեր սանիտարական կազմակերպութեան թերու-
թիւնների մասին, սակայն շատ պակասաւոր, շատ
անորոշ:

Ուտելեղէնի և խմիչքների առևտրի վերաբե-
րեալ տնօրինութիւնը արգելում է այդ տեսակ ապ-
րանքների փչացած և առհասարակ առողջութեան
վնասակար ձեռվ ծախելլ, պատժի է ենթարկում
պատշաճ լստակութեան և մաքրութեան բացա-
կալութեան դէպքում. մթերքների կեղծման և
ֆալսիֆիկացիայի վերաբերմամբ Բժշկական Կանո-
նադրութեան մէջ ընդհանուր զրութիւններ չկան.
մթերքների կեղծումն ու ֆալսիֆիկացիան հայած-
ում է լոկ իբրև խարերայութիւն, թերակշուու-
թիւն, այն էլ դատական հիմնարկութիւնները
պահանջում են, որ տուժող լինի:

Արգելուած է կիսաեփ հայի վաճառումը, բայց
ոչ մի խօսք չկայ նեխած, փտած և փշացած ալիւ-
րից պատրաստած հայի մասին. բացի այդ, չի
որոշուած, թէ ո՞ր հայը պէտք է հում համարել:

Սանիտարական օրինադրութիւնը չափազանց
մեզմ և ներողամիտ է վերաբերում օրինազանցու-
թիւններին և յանցանքներին, այնպէս որ պատրժ-
ւածները բաւականաչափ խրատական դաս և վրո-
տահելի նախազգուշացում չեն ստանում:

Սանիտարական օրինազանցութիւնների հա-
մար նշանակուած տուգանքը երբեմն, օրինակ, այն-
քան աննշան է, որ զրա վեարելլ յանախ աւելի
հեշտ է, քան օրինազանցութիւնները վերացնել:

Եթէ ի նկատի առնենք, որ սանիտարական
յանցագործութիւնը միայն տղիտութիւնից չէ ա-
ռաջ գալիս, այլ երբեմն, գուցէ և յանախ, զի-
տակցօրէն, շահախնդրական հաշիւններից, և փտանդ
է սպառնում ազգաբնակութեան մի ամբողջ խմբի
առողջութեան, հասկանալի կը լինի, որ այդպիսի
պատիմները չի կարելի բաւարար համարել:

Ընդհանրապէս կանոնադրութեան այդպիսի
որոշումները մեծաւ մասամբ վաղուց են հրատա-
րակուած և շատ հնացել են:

Սանիտարական բազմատեսակ թերութիւննե-
րով առատ այդ հողի վրայ ահա, կեանքի և առող-
ջութեան, կարելի է ասել, կատարեալ անապահո-
վութեան մէջ, փարթամ և կենսունակ ծաղկի նր-
ման անում են ամեն տեսակ վարակիչ ախտեր,

հիւանդութիւններ, նրանց հետ էլ մահացութիւն,
որոնց մասին անցողակի կերպով լիշել ենք վերեւ:

Եւրոպակում մահացութեան կողմից Ռուսաս-
տանին է պատկանում առաջնութեան տիտուր
դափնին:

25 տարուայ աեղեկութիւնների համաձայն,
Ռուսաստանում իւրաքանչիւր 1.000 հոգուն դա-
լիս է միջին թւով 35 մեռնող, մինչզեռ Անդրե-
յում՝ 19, Ֆրանսիայում՝ 22, Գերմանիայում՝ 24:

Կեանքի միջին աեղեկանութիւնը Ռուսաս-
տանում հասնում է 29 տարուայ, այն ինչ Անդ-
րեյայում՝ 45 տարուայ, Ֆրանսիայում՝ 43, Նվե-
դիայում՝ 50 տարուայ:

Սարսափելի չափերի է հասնում մեղանում
երեխանների մահացութիւնը՝ Ռուսաստանում մին-
չև հինգ տարեկան հասակը մեռնող երեխանները
կազմում են բոլոր մեռնողների 57%, Շվեյցա-
րիայում՝ 33%, Ֆրանսիայում՝ միայն 28%:

Եւրոպական Ռուսաստանի 50 նահանգներում
1.000 նորածիններից մինչև մի տարեկան հասակը
միջին հաշւով 275 հոգի է մեռնում, իսկ մի քանի
նահանգներում մեռնումների կեսից աւելին մեռ-
նում է մի տարին չըրացրած:

Եւրոպական Ռուսաստանում հաղար մեռնուած-
ներից երկրորդ տարում մեռնում է 101 հոգի, իսկ
Շվեյցարիայում՝ 31, Ֆրանսիայում՝ 49:

Կան նահանգներ, որտեղ ծնուածների կէսը,
նոյնիսկ կէսից էլ աւելին մեռնում է հինգ տարին
ըրացրած:

Մեծամասն դէպքերում մահացութեան անմիշական պատճառը հանդիսանում են կտրուկ ստամոքսա-աղիքային կատարներ (ամառնային փորլութութիւն) քերեխաների համար և կտրուկ-վարակիչ հիւանդութիւններ բոլոր հասակների համար:

Բացի քութէշից, զիֆտերիտից և փորահարինքից (բրյոշիոյ տիֆ), մեռնում են նաև բերովի վարակիչ հիւանդութիւններից, օրինակ՝ խոլերայից:

Աւելի խոշոր թուերի է հասնում հիւանդացումը. դրա վիճակագրութիւնը տարաբաղդաբար շատ անկատար է. առանձնապէս պակասաւոր են պաշտօնական տեղեկութիւնները:

Ուստաստանը — գրանով 50 ներքին նահանդները հասկանալով — դոկտ. Էկկի հաշւով տարեկան իւրաքանչիւր հազար մեռնողից տասն հինգ հոգի բոլորովին ի զուր է կորցնում, չծեռնարկելով գիտութեան ցոյց տուած նախաղգուշական միջոցները, որոնց օգուտը հաստատուած է բազմթիւ քաղաքների և ամբողջ երկիրների փորձով:

Բժշկական օգնութեան զիմողների ^{1/4}-ից աւելին թոքախտով և մալեարիալով բռնուածներն են եղել, այսինքն ալնպիսի հիւանդութիւններով, որոնք կարելի է վերացնել բժշկա-սանիտարական միջոցներով և ազգաբնակութեան տնտեսական ու կըրթական մակերեսութը բարձրացնելով:

Ը.

Կտրուկ-վարակիչ հիւանդութիւններից էլ աւելի սարսափելի են մեր երկրի քրոնիքական հիւանդութիւնները, ինչպէս օրինակ՝ թոքախտը և սիֆիլիսը, որոնք ահազին տեղ են բռնում հիւանդացման և մահացութեան պատճառների մէջ:

Փաստերը հաստատում են, որ Ուստաստանի գիւղական մասում թոքախտ-բարակացաւը աւելի է զարգացած, քան եւրոպակի երկրագործական շրջաններում. Եթէ քիչ խորը թափանցենք մեր գիւղական բնակչութեան կեանքի պայմանների մէջ, գժուար չի լինի չիշեալ փաստերին բացարութիւն տալ:

Թերակերութիւնը, մշտական զրկանքները, որոնցով շաղկապուած է գիւղացու կեանքը, շատ պարզ կերպով պայմանաւորում են նրա հակումը դէպի ամենատեսակ հիւանդութիւնները:

Այդ գործօններին միանում է նաև դրսի աշխատանքը, որը ուժապառ աշխատաւորին քաղաք է մղում գործ փնտրելու, որտեղ, քաղաքային կեանքի ոչ այնքան բարելյաշող պայմանների շնորհիւ, զոհ է զնում թոքախտին:

Քաղաքում թոքախտ ստանալով և աեսնելով, որ այլևս չի կարողանալու ընտանիքի համար փող աշխատել, գիւղացին տուն է շտապում, որպէսզի իւրակինների շրջանում մեռնի:

Ծառայութեան մէջ լրջօրէն հիւանդացած

զինւորը բժիշկների խորհրդով դարձեալ տուն,
զիւղ է ուղարկուում կազդուրուելու:

Եւ քաղաքից վերադարձած աշխատաւորն ու
կազդուրուելու ուղարկուած զինւորը վարակիչ
հիւանդութիւնների բունն են դառնում դիւղական
շրջանում:

Դրանց գերը վարակիչ հիւանդութիւնների
տարածման մէջ իր իսկական գոյնով կըպատկերա-
նալ — ասում է կազանի պրոֆ. Կապուստինը —
եթէ ի նկատի առնենք, որ միմիայն Պետերբուրգն
ու Մոսկվան տարեկան տասնեակ հազարաւոր
թոքախտաւորներ են տալիս:

Ռուսաստանը Արևմտաքից անցնում է նոյն-
պէս դործարանա-ծուլարանալին դասակարգի մէջ
այդ ախտի ժաւալման աստիճանով, որը, ի հարկէ,
դարձեալ բաւարար բացատրութիւն է դանում մեր
բանւորների կեանքի անտանելի պայմաններով:

Զեմստվօյական և սանիտարական բժիշկները,
որոնք անմիջական լարաբերութեան մէջ են բան-
որի առողջութեան հետ, լիշտակում են, թէ
բանւորութեան ծաղիկը թոքախտից է ոչնչանում:

Սնկարելի է լոկ սառնարիւն հանդիսատես
լինել, ասում է դոկտ. Ակարիչեսկին, տեսնելով, թէ
ինչպէս հսկայական չափով հիւանդանում և մեռ-
նում է ազգաբնակութեան աղը, նրա տնտեսական
բարեկեցութեան պատուանդանը,

Այն ժամանակ, երբ Անդիխայում, Գերմանիա-
յում և Միացեալ Նահանդներում թոքախտից մեռ-
նողների թիւը տարեց տարի նուազում է ապշե-

ցուցիչ կանոնաւորութեամբ և զարմանալի մշտա-
կանութեամբ — շնորհիւ այդ ախտի դէմ մզւող
կռուի համար ծեռնարկուած միջոցների — Ռու-
սաստանում, դոկտ. Ակվորցովի ասելով, այդ ախտը
արագաքայլ առաջ է ընթանում:

Մեղանում տարեկան մինչև հազար հոգի է
մեռնում թոքախտից, իսկ ապրող թոքախտաւոր-
ների թիւը պէտք է միլիոններով հաշւել ($2-2^{1/2}$ մի-
լիոն, այսինքն՝ Եւրոպայի թոքախտաւորների մի
երրորդ մասը):

Միենոյն ժամանակ եթէ ազքի առաջ ունե-
նանք, իրաւացի կերպով նկատում է լայտնի բժիշկ
Բյումենտալը, որ թոքախտը հարուածում է աղ-
գաբնակութեան ամենից աւելի աշխատաւոր մասը,
այն էլ նրա աշխատանքի ամենաբնդունակ ժամա-
նակաշրջանում, տեսում է ամիսներ և տարիներ,
այն ժամանակ կարելի կլինի պատկերացնել թէ,
բայցի վշտից և բարոյական տանջանքներից, թոք-
ախտը որքան նիւթական վնաս, բայքայում և
աղքատութիւն է առաջ բերում:

Համաժայն գիտութեան վերջին ցուցմունքնե-
րի — որոնք փալուն կերպով հաստատուած են
Եւրոպայի և Ամերիկայի փորձերով, ուր թոքախտը,
ինչպէս լիշեցինք, սիստեմատիքաբար թուլանում
է — սարսափելի ախտը բուժելի է, այն էլ այն-
պիսի հասարակ միջոցներով, ինչպէս մաքուր օղն
է, առատ սնունդը և կատարեալ հանդսառութիւնը,
որոնք կարող են հիւանդները ծեռք բերել ոչ թէ
հիւանդանոցներում, այլ լատուկ, փակ հիմնարկու-

թիւններում, այսպէս կոչուած սանատորիաներում՝ կառուցուած քաղաքից դուրս, սարերի, անտառների և գաշտերի մաքուր, չափականուած մըթնոլորտում:

Փորձը ցոյց է տալիս, որ սանատորիաներում առողջանում են հիւանդների 50%—70%, ընդ որում, ասում է թոքախտագէտ դոկտ. Բլիւմենտալը, բուժման արդիւնքը սանատորիաներում անկախ է մնում կլիմացից, տաքութեան աստիճանից, երկաչնութիւնից և լայնութիւնից:

Տարաբաղդաբար, դարձեալ պէտք է տսել, որ մեղանում սանատորիաներ գոյութիւն ունեն միայն եալտայում, Մոսկվայում, Կիևում, Վարշաւայում, Խալիլայում (Ֆինլեանդիա) և ուրիշ մի քանի քաղաքներում, սակայն այդ բոլորը ներկայացնում է մի կաթիլ ջուր բաւարարութիւն չստացած կարեքների ժովում. սանատորիաներ են հարկաւոր երկրի բոլոր շրջաններում:

Թօքախտի դէմ կոհւ մղելու և սանատորիա հիմնելու մէջ միայն բժիշկները չեն, որ պիտի շահագրգռուած լինեն. ժամանակ է հասկանալու, որ թոքախտը ոչ միայն հիւանդութիւն է, այլ և սոցիալական չարիք, որը պահանջում է ընդդիմագրութիւն պետական և հասարակական զանազան տարրերի կողմից, ինչպէս «Կարմիր Խաչը», ապահովագրական հիմնարկութիւնները, փոխադարձ օգնութեան կասսաները, քաղաքային վարչութիւնները, իշխանութիւնը, բարեգործական ընկերութիւնները և այլն:

Թոքախտի, ինչպէս և առհասարակ հիւանդութեան և մահացութեան դէմ մղուած կոխիք պէտք է դուրս բերուած լինի հասարակական կեանքի լայն ասպարէզի վրայ:

Սիփիլի՛ս . . .

Միայն պաշտօնական տեղեկութիւնների համաձայն դրանով բռնուած է պետութեան ամբողջ աղդաբնակութեան մի տոկոսը, սակայն իրապէս սիֆիլիսուների թիւը երեք-չորս անգամ աւելի է երես:

Պաշտօնական տեղեկութեանց մէջ են մանում բժշկական օգնութեան դիմողները միայն, հետեապէս հիւանդների փոքրամասնութիւնը. առհասարակ մեր պաշտօնական վիճակագրութիւնը շատ է կաղում. և այնպիսի հարցում, ինչպէս սիֆիլիսի տարածումը, նրա ցուցմունքները ամենից քիչ են գնահատելի և վստահելի:

Ենորհիւ տղիտութեան, անմաքրութեան, նախազգուշական միջոցների մասին բաւականաչափ հասկացողութիւն լինելուն *), վարակուելու հնարաւորութիւնը սպառնում է մեծամասնութեան, և իրօք այդ հիւանդութիւնը հսկայական բոցի ձեռվ պատում է ամբողջ երկիրը, տարածում է զարմանալի արագութեամբ, այն էլ ահազին գերակշռութեամբ ոչ սեռական հանապարհով:

*) Պրոֆ. Մելիկովը խորհուրդ է տալիս կասկածելի կնոջ հետ յարաբերութիւն ունենալուց առաջ և յետոյ կալամելնայեայ պոմազա դործ ածել:

Սիֆիլիսագէտների 1897 թուականի համաժողովի տեղեկութիւնների համաձայն, Ռուսաստանում ոչ սեռական ճանապարհով սիֆիլիսով վարակուածների թիւը կազմում է 80—90%:

Ենորհիւ մեր անկուլտուր պայմանների, ոչ ոք չի ապահովուած ոչ սեռական ճանապարհով սիֆիլիս ստանալուց:

Հարստութիւնը, հասարակական բարձր դիրքը, ճոխ բնակարանը — որտեղ, ըստ երկութիւն, այդ հիւանդութիւնը մուտք չունի — անբաւարար երաշխիք են. նա հեշտութեամբ թափանցուած է ամենուրեք:

Սիֆիլիսի դէմ ուղղուած կոռուին արգելք է հանդիսանում ի միջի ալլոց նաև նրա մասին տիրող հին հասկացողութիւնը, թէ դա արատաւոր մի հիւանդութիւն է. ժամանակ է արդէն, որ այդ հիւանդութեան ճանաչողութիւնը անհամեստութիւն չհամարուի:

Ակնյալանի է, որ սիֆիլիսը, իր ծաւալման արդի պայմաններում աւելի պախարակելի չէ, քան ախիքը, թոքախար, գողերեցքը (մալեարիան):

Սիֆիլիսի դէմ մզուած կոռուի հարցը, ինչպէս և սանիտարական հարցերի մեծամասնութիւնը, պէտք է հասարակական կեանքի լայն առարկը հանուած լինի:

Սիֆիլիսը լոկ հիւանդութիւն չէ, այլ ընդհանուր աղէտ, սոցիալական չարիք, որը միահամուռ կոր է պահանջում, եթէ ոչ ալտրուիդմի և հա-

սարակականութեան սկզբունքների տեսակէտից, գէմ ինքնապահպանութեան պարզ զգացմունքից:

Սիֆիլիսի տարածման զօրաւոր գործօններից մէկն էլ տղիտութիւնն է, որի դէմ միմիայն բժիշկները անզօր են, անզօր են մենակ բժիշկները նաև պոռնկութեան սիֆիլիսի տարածման ալդ կարեոր գործօնի դէմ:

Շատ անդամ ենք լիշտակել մեր դրբուկներում հոչակաւոր պրոֆ. հանդուցեալ Տարնովսկու խօսքերը. զարձեալ ենք կրկնում. «վերացրէ՛ք պրոլետարիատը, ցրեցրէ՛ք զօրքը, կրթութիւնը հնարաւոր դարձրէ՛ք աւելի կարճ ժամանակամիջոցում, հնարաւորութիւն տուէք բոլոր ցանկացողներին ամուսնանալու, երաշխաւորէ՛ք նրանց ընտանեկան կեանքի անդորրութիւնը, համոզեցէ՛ք բոլորին բարոյական, ազնիւ կեանք վարելու, այնուամենայնիւ պոռնկութիւնը գոյութիւն կ'ունենալ»:

Իդէալական պայմանները, որոնց ժամանակ ես անհնար է համարում պրոֆ. Տարնովսկին պոռնկութիւնը արմատախիլ անել, առայժմ գեռանիրադորձելի են. բայց այդ չարիքի դէմ լաշողակ կախւը հնարաւոր է պակաս իդէալական, սակայն աւելի իրազորձելի պայմաններում:

Հոգ չէ, թէ այդ կախւը չի վերացնի պոռնկութիւնը, բաւական է, եթէ կրճատի և թուլացնի:

Սենատոր Կոնիի տեղեկութիւնների համաձայն, 50%-ից աւելի անառակութեան ճանապարհն են ընկնում կեանքի գանազան անբարեխաչող հանգամանքների շնորհիւ. 12% միայն ծնողներ ունեն,

մնացածները դեռ վաղ երեխալութիւնից զրկուած են եղել ծնողներից և իրանց արհեստին են նուիրւել ծանր կարիքի ու բարոյապէս ապականիչ սպայմանների ազգեցութեամբ. այդ արհեստով պարապողներից միայն 15% զրադէտ է եղել:

Այդպէս ուրեմն, կարիքը, մենակութիւնը, տղիտութիւնը — ահա պոռնկութեան զիխաւոր զործօնները, որոնք նախորոշում են զրա դէմ ուղղուած կոռուի միջոցները. նիւթական օգնութիւն, կրթութիւն, խնամատարութիւն — ահա թէ ինչի կարիք ունի անառակութեան ապագայ զոհերի հսկալական տոկոսը:

Այդ մի կողմից. միւս կողմից պէտք է *հասարակութեան զիտակցութիւնից արմատախիլ անել այն այլանդակ նախապաշարումը, թէ ժուժկալութիւնը ունէ մէկին կարող է վնասել, իսկ անառակութիւնը օգտակար է և պէտքական. ներողամիտ, մինչև իսկ անտարբեր հայեացը տղամարդկանց ցամուսնական անառակութեան մասին պէտք է ընդմիշտ դատապարտուած և խարանուած լինի: Պէտք է կոիւ մղել զրականութեան և գեղարուեսի մէջ այնպէս հաստատ բուն զրած պոռնկազրութեան դէմ. անհրաժեշտ է դաստիարակչական համապատասխան ներգործութիւն անել զպրոցական երիտասարդութեան վրայ:

թ.

Թոքախափ և սիֆիլիսի հետ, հիւանդացման և մահացութեան զօրաւոր գործօն պէտք է համարել նաև արբեցողութիւնը՝ միաժամանակ թէ սոցիալական և թէ մարմնական այդ ախար:

Արբեցողութիւնը՝ ինքն արդէն մի հիւանդութիւն լինելով, հոգեկան հիւանդութիւնների 35%-ի հիմքն է գառնում, հակում է զէպի թոքախար և ուրիշ բաղմաթիւ հիւանդութիւններ:

Դոկտ. Գրիգորելի զիտողութիւնների համաձայն, բարակացաւ ունեցող 980 հիւանդներից 593 հոգի, այսինքն 60% անցեալում արբեցող են եղել. 638 թոքախաւոր տղամարդկանցից 508 հոգի կամ 79%- արբեցող է եղել, իսկ 140 կանանցից՝ 85 հոգի կամ 24%:

Օրինակ ալկոհոլիկների 50% մեռնում է այնպիսի հիւանդութիւնից, ինչպիսին է թոքերի բորբոքումը, որից սովորական մեռնողների թիւը ընդհանուրի 10%-ից չի անցնում. խոլերալի ժամանակ արբեցողները չորս անգամ աւելի են մեռնում, քան ժուժկալները:

Ինքնասպանութիւնների գրեթէ 50% արբեցողութիւնից է առաջանում. իսկ ընդհանրապէս արբեցողութիւնից մեռնողների թիւը Ռուսաստանում հինգ հազարից պակաս չէ:

Եթէ թոքախան ու սիֆիլիսը մինչև այժմ զիմագրաւման քիչ թէ շատ լուրջ միջոցներ չեն

առաջ բերել, չի կարելի նոյնը ասել արբեցողութեան մասին:

Վերջինիս զէմ եռանգուն կոիւ է մզում հասարակութիւնը, ըստ երևոյթին նաև պետութիւնը. պետութիւնը հրապարակ հանեց դրա զէմ այնպիսի մի զօրեղ զէնք, ինչպիսին օղու մենավաճառն է՝ ժողովրդական ողջախոհութեան հոգաբարձութեան հետ միասին:

Չժանրանանք այստեղ հանրածանօթ այն իրողութեան վրայ, որ կառավարութեան Ռեփորմը թուղգուրս եկաւ ալկոհոլի զործածութիւնը ոչնչացնելու մէջ. նոյնիսկ չպահասեցրեց, այլ դուրս բերեց փողոց, ներս տարաւ. ընտանիքի մէջ և զոյացրեց մենավաճառի ոչ յօդուտ ժողովրդին զործադրող եկամուտ. ժողովուրդը աւելի ևս աղքատանում է և տուժում. այս էլ ձեզ կոիւ արբեցողութեան զէմ, բիւրոկրատական կոիւ . . .

Ռուսաստանի 1900 թուականի եկամուտը խմիչքներից և դրա հարկերից կազմում է 316^{1/2} միլիոն ըռուբլի — դա ռուսական բիւշէի եկամտային զիմաւոր աղբիւրն է:

Խմում է թէ հարուստը և թէ աղքատը:

Հասարակական առողջապահութեան շահերի տեսակէտից մեզ կարեոր է իմանալ, թէ արդի հասարակութեան երկու դասակարգերից որի մէջ է աւելի զարգացած ալկոհոլիզմը՝ ունեորների, թէ չունեորների. մեզ կարեոր է իմանալ դրանցից իւրաքանչիւրի սոցիալ-տնտեսական դրութիւնը և դրա հետևանքները:

Ունեոր զասակարգերի մէջ ալկոհոլիզմը տարածում է շնորհիւ ապահով կացութեան, աշխատելու կարիքի բացակայութեան և յագեցած պարապութեան:

Ըստունակութեան և աշխատանքի հմտութեան կորուստը զրկում է մարդուն նաև այն հաճոյքներից, որոնք տալիս է աշխատանքը. սակայն հաճոյքի ծարաւը այնուամենայնիւ մնում է:

Սասարիկ ցանկութիւն է մնում նաև մի կերպ յամանակը սպանելու, մի բանի մասին մտածելու և հոգալու:

Մի խօսքով ծշտական անհրաժեշտութիւն է մնում ուեկ զործունէութեան գոնէ իլիւզիան (մտաւոր պատրանքը) ստեղծելու, որովհետեւ բացարձակ անգործութեան դրութիւն զգալը հակառակ է մարդկային բնութեան՝ շնորհիւ նրա ֆիզիքական և ֆիզիոլոգիական յատկութիւնների:

Հնաց այդ հողի վրայ է ահա զարգանում ունեոր դասակարգի մէջ սաստիկ ցանկութիւն այլեալ ստորակարգ հաճոյքների, որոնց մէջ առաջնակարգ տեղ է բռնում նաև ալկոհոլիզմը:

Խոկ խեղճ աղքատը, բանւորը չի կարող երկար-բարակ մտածել ալկահոլիզմի հետևանքների մասին. նա մրսում է — ալկոհոլը նրան տաքացրեց, բաղցած է — ալկոհոլը յագեցման զգացմունքը զարթեցրեց նրա մէջ. էլ ի՞նչ է պէտք նրան:

Նա ծանծրովթ է զգում, տաղտկութիւն, նրա սիրտը ճմլւում է իր դրութեան անելանելիութեան զգացմունքից — ալկոհոլը զուարժացնում է, ալ-

կոհոլը ցրում է տաղտկութիւնը, բարձրացնում է տրամադրութիւնը՝ և հրաշալի է. չէ՞ որ այդ է միայն պէտք չունեօրին, պրոլետարին:

Դիցուք թէ բանւորը երբեմն զգում էլ է, որ իրապէս ալկոհոլը չի տաքացնում, չի յագեցնում, չի կազդուրում. այդ կարեռ չէ նրա համար. կարեռն այն է, որ բանւորը անծնապէս ստանում է այդ բոլոր զգացողութիւնները:

Նա ստեղծում է ալկոհոլի բարերար ներգործութեան իլիւզիան. նա հաւատում է վերջինիս և յամառութեամբ մնում է այդ ինքնախարէութեան մէջ, մինչեւ իսկ եթէ յետագայում դրա փոխարէն սոսկալի հատուցումն անդամ տալու լինի:

Եւ նա հատուցանում է, որովհետեւ բանւոր դասակարգի արգի զրութիւնը կենսական անհրաժեշտութիւն է գարձնում այդ խարէութիւնը:

Ահա թէ ինչ է ասում էնդեմը ալկոհոլիզմի մասին անդիխական բանւորներին վերաբերեալ իր հոչակաւոր հետազոտութեան մէջ:

Ամենատեսակ պայմաններ, բազմատեսակ հրապուրներ ուղղակի զրգում են բանւորին արբեցողութեան:

Օղին նրանց համար հաճուքի դրեթէ միակ աղբիւրն է հանդիսանում, և կեանքի բոլոր պայմանները կարծես դիտմամբ են նպաստում այդ աղբիւրը ըստ կարելոյն մատչելի դարձնելու:

Յոդնած - խոնչացած վերադառնում է բանւորը տուն. բնակարանը խոնաւ է, ցեխոտ, անլարմար, այն ինչ նրան զուարճութիւն է պէտք,

մի այնպիսի բան, որի համար արժենալիս լինէր աշխատել, որը տանելի դարձներ վաղուայ ծանր օրուայ միտքը:

Թոյլ առողջութեամբ, մանաւանդ վաս մարսողութիւնից առաջացած նրա սովորական ճնշող և ծանր տրամադրութիւնը բոլորովին անտանելի է դառնում՝ շնորհիւ կեանքի շրջապատող պայմանների, գոյութեան անապահովութեան, շնորհիւ այլ և այլ պատահականութիւններից կախումն ունենալուն և այդ սոսկալի զրութիւնից դուրս գալու ուեկ միջոց չգտնելուն:

Նրա տկար օրգանիզմը՝ աւելի ևս թուլացած ասղականուած մթնոլորտից և վաս սնունդից, ստիպողական կարիք է զգում արտաքին զրգուման:

Հասարակական շրջանի կարիքին բանւորը բաւարարութիւն է տալիս պանզոկում, որովհետեւ չկայ ուրիշ մի վայր, որտեղ նա իր բարեկամներին հանդիպել կարողանար. Ինչպէս չհրապուրուի ու շմիմի, ինչպէս զիմանայ խմիչքի գայթակղութեան:

Ընդհակառակը, այդպիսի պայմաններում բարոյական և ֆիզիքական անհրաժեշտութեամբ բանւորների մեծամասնութիւնը անձնատուր պիտի լինի արբեցողութեան:

Բանւորներին արբեցողութեան մզող զուտ ֆիզիքական աղղեցութիւններից զատ, ահազին նշանակութիւն ունի նաև ուրիշների օրինակը, թերի գաստիարակութիւնը, արբեցողութեան անձնատուր եղած ծնողների անմիջական աղղեցութիւնը, ծնողների, որոնք անձամբ են տալիս երե-

խաներին օղի, արբեցողութեան մէջ գէթ մի քանի ժամով կեանքի կարիքն ու վիշտը մոռանալու հնարաւորութիւն դանելու յոյսը:

Ենդելսի խօսքերից տեսնում ենք, որ պրոլետարին ալկոհոլիզմի գիրկն է զցում ոչ թէ գործի պակասութիւնը, այլ ընդհակառակը՝ չափից դուրս աշխատանքը, որը ոյժերի ամենազօրեղ լարումն է պահանջում, ուժասպառ է գարձնում և պառաւացնում:

Սրդիւնագործական ներկայ կեանքը բանւորից պահանջում է նեարդային էներգիայի (եռանդ) և ֆիզիքական ոյժերի ամենօրեայ հսկայաչափ մրսխումն:

Սակայն չափազանց երկարատե բանւորական օրւայ շնորհիւ, բանւորի տրամադրութեան տակ մնացած հանգստութեան ժամանակը շատ անբաւարար է:

Իսկ աշխատանքի չնչին վարձատրութեան շնորհիւ աշխատաւոր դասակարգի նունդի մասին աւելի լաւ է բոլորովին չխօսենք:

Բանւորը միշտ աւելի ոյժ է մօխում, քան ստանում է, ուստի և մշտապէս կարիք է զցում մի ունպիսի միջոցի, որը նրան անդադար կազդուրէր, և ահա ագահօրէն ձեռք է զարնում ալկոհոլին:

Յայտնի է բանւորի նիւթական դրութեան անկայունութիւնն ու անբաւարարութիւնը նոյնիսկ այն դէպքում, երբ նա որոշ բարեկեցութեան է հասել:

Բանւորը զիտէ, որ իրան ամեն վայրկեան կարող է փողոց շպրտել այս կամ այն պատահականութիւնը. դրա մասին յիշեցնում է նրան կապիտալիստական կարգի բնորոշ և մշտական երեսլիթներից մէկը սոված աշխատազուրկների պահեստի բանակը:

Առաջ է գտիս կիզիչ կարիք գէթ ժամանակ առ ժամանակ ինքնամոռացութեան մէջ ընկղմելու, շրջապատի իրականութեան ճնշող տպաւորութիւններից հանգստանալու, վերջիններս մի կերպ քաղցրացնելու և լետագայ աննախանձելի գոլութեան համար հոգեկան ոյժերը թարմացնելու — և նա զինով է խեղգում իր վիշտը:

†.

Մենք պարզեցինք, որ հէնց սոցիալ-տնտեսական մոմենտներն են յատկապէս պայմանաւորում ոգելից խմիչքների լայնածաւալ տարածուած այն կարիքը, որով միայն կարելի է բացատրել նրա հսկայական սպառողութիւնը:

Բայց, ինչպէս յայտնի է, կարիքը պահանջ է ծնում, իսկ պահանջն էլ՝ առաջարկութիւն. դրանով — ասում է իրաւացիօրէն դոկտոր Գրանովսկին Պիրոզովի յիշատակին Մոսկվայում գումարչած համաժողովում — անտեսազիտութեան օրէնքը հող է գտնում նաև ալկոհոլական հարցի մէջ:

Եւ ազգաբնակչական մասսայի դէպի ոգելից խմիչքները ցուց տուած լայն պահանջը յենարաւն է գտնում ալկոհոլիզմի մի ուրիշ չափազանց կարեւոր

պատճառական գործօնի՝ ալկոհոլական արտադրութեան դրած ահազին զրամագլխի մէջ:

Դինեղործութեան, գարեշրագործութեան, պանդոկալին գործերի համար յատկացւած զումարը հսկալական է: Եւ իր բնութեամբ արդէն այդ զրամագլուխը շահագրգռուած է ալկոհոլիզմի մասսայական տարածման մէջ:

Եթէ ալկոհոլի մասսայական սպառումը չընդարձակուի, այսինքն՝ եթէ ալկոհոլական արդիւնագործութեան բերքերի պահանջը չմեծանայ, նրա վրայ գործադրուած զրամագլուխը կապիտալիստական համախմբման ընդհանուր օրէնքով անխռուսափելիօրէն մահուան է դատապարտուած:

Ահա թէ ինչու ալկոհոլական արտադրութեան վրայ գործադրուած խոշոր զրամագլուխը, ալկոհոլիզմի սոցիալական ուրիշ պատճառների կարգը պէտք է դասել, իբրև անկախ, ինքնազնացուցիչ մի գործօն:

Եւ այդ զրամագլուխը արդի հասարակութեան ամենահզօր կազմակերպութեան՝ պետութեան ձեռին կարող է ծառայել և ծառայում էլ է իբրև վտանգաւոր զէնք հասարակական առողջապահութեան դէմ:

Եւ իրոք, պետական կապիտալը, ունենալով շատ աւելի զօրեղ կազմակերպութիւն և նախաձեռնութեան աւելի ուժեղ միջոցներ, քան մասնաւոր կապիտալը, վերջինից շատ աւելի վնասակար է, և — ոռոս մէնավաճառութեան օրինակը ի նկատի առած — ժողովրդական առողջութիւնն

ու բարեկեցութիւնը կործանող զօրեղ գործօն է հանդիսանում:

Հարց է ծագում, թէ ալկոհոլիզմի դէմ կը ունելու համար ի՞նչ միջոցներ ունի զիտութիւնը և ի՞նչ կարող է անել այդ ուղղութեամբ հասարակական առողջապահութիւնը:

Զկայ ալկոհոլիզմը բուժելու անմիջական միջոց, եթէ չհաշուենք ալկոհոլիզմների բուժարանները ներգործումն և մի քանի գեղեր, ուստի և հասարակական առողջապահութիւնը պէտք է իր ամբողջ ուշագրութիւնը կենտրոնացնէ նախազգուշական միջոցների վրայ, ինչպէս բարակացաւի դէպքում:

Ինչպէս տեսանք, ալկոհոլիզմի արմատական պատճառը ժողովրդական լայն մասսաների անտեսական գրութեան մէջ է թաղուած:

Այն ամենը, որ բարեւոքում է բանւոր դասակարգի զրութիւնը, այն է՝ բանւորական օրւայ կը բնաւումն, աշխատավարձի բարձրացումն, բանւորի զրութեան անհաստատութիւնն ու հետևեալ օրւայ անապահովութիւնը թուլացնող ամենասեակ ձեռնարկութիւններ՝ ինչպէս ապահովագրութիւն դժբաղդ զիտուածներից, հիւանդութիւնից, ծերութիւնից և աշխատավրկութիւնից և այն, բանւորի իրաւական գրութեան բարելաւումն և այն և այլն:

Այդ բոլոր միջոցները մեծ դեր կը կատարէն անշուշտ ալկոհոլիզմի դէմ ուղղուած կոռուի մէջ դրանց բոլորի հետևանքը կը լինի՝ ալկոհոլի

իրրե արհեստական գրպոիչ ոյժի — պահանջի նուազումն:

Ոչ այնքան յատուկ սանիտարական, որքան սոցիալ-քաղաքական բնաւորութիւն կրող այդ ծեռնարկութիւններից առանձնապէս կարեոր նշանակութիւն պէտք է տալ պրոֆեսիոնալ, աշխատաւորական առողջապահութեան, նոյնպէս և կենցաղական պարագաներին (բնակարանային հարց, սննդառութիւն):

Ահազին գեր պէտք է կատարեն լուսաւորիչ գործօնները, ինչպէս՝ դրազարանները, դասախոսութիւնները, լրագիրները, թատրոնները և այլն:

Այդ բոլոր միջոցները կարող են ալկոհոլի հասարակութեան հասցրած վնասը թուլացնել, նրա զոհերի թիւը նուազեցնել, սակայն երբէք չեն կարող դրանք չարիքը վերջնականապէս արմատախիլ անել, քանի դեռ գոյութիւն կ'ունենալ կապիտալիստական կարգը:

Ալկոհոլիզմը սոցիալական, հասարակական միերկութիւն է, աշխատանքի և կապիտալի մէջ կապիտալիզմի ներմուծած յարաբերութիւնների զարգացումը միայն հնարաւոր է դարձրել ոգելից խմիչքների պահանջի և սպառողութեան այն սոսկալի անումը, որով բնորոշւում է իրերի ներկայ դրութիւնը:

Ալկոհոլական հարցը կապիտալիզմի հարազատ ծնունդն է, նա հետեւանք է աշխատաւոր մասսալի դրութեան արգի հասարակութեան մէջ. կապիտալիզմի հետ է ծնուել, նրա շնորհիւ է աւելի ու

աւելի խոշոր չափեր ընդունել, նրա հետ էլ կրվերանայ երկրի երեսից:

Այդ ուղղութեամբ պէտք է տանի կռիւր հասարակական առողջապահութիւնը:

Ալգակս ուրեմն, ալկոհոլի վնասների գէմ ուղղուած այդ կռիւր պահանջում է ամբողջ աղքաբնակութեան, հասարակական բոլոր ոյժերի միահամուռ դրոհը. արբեցողութեան հիմնաքարն են կազմում տղիտութիւնը, սովոր, կենցաղավարութեան անբաւարար պարագաները, ժառանգականութիւնը:

Թռքախտի, սիֆիլիսի, արբեցողութեան գէմ ուղղուած կռիւր չի կարող, ի հարկէ, մեր երկրի սանիտարական մակերեւոյթը բարձրացնելու համար գործադրուած միջոցները սպառել:

Այդ կռիւր մի մասնաւոր միջոց է միայն. դրա հետ միասին պէտք է — սանիտարական գործի ալլազան և բազմաթիւ թերութիւնների և դրանց ծնող պատճառների համեմատ — մի շարք միջոցներ ծեռնարկել:

Սանիտարական մակերեւոյթի բարձրացման առաջին միջոցը աղքաբնակութեան տնտեսական անապահովութեան գէմ կռուելը պիտի լինի:

Եւ աղքաբնակութեան տնտեսական անապահովութիւնը ամեն աշխատանք ապարդիւն է գարձնում, իսկ տնտեսական ապահովութեան արգելը է հանդիսանում տղիտութիւնը, ուստի նախ և առաջ դպրոց է պէտք:

Աղքաբնակութեան բարեկեցութիւնը անհնա-

րին է, առանց նրա իրաւական կարիքներին բաւարարութիւն տալու:

Կուլտուրան անհրաժեշտօրէն ենթազրում է ֆիզիոլոգիական տարրական պահանջների գոհացուծը. բաւարար չափով սնունդ ստացողը միայն կարող է շանս ունենալ քաղաքակրթութեան հաղորդակից լինելու և ապա առաջ գնալ տնտեսական գարզացման ուղիով:

Ահա պատճառների և հետեանքների շրջանառութիւնը՝ սովոր հիւանդութիւններ է մնում, հիւանդութիւնները թերակերութիւն են առաջացնում, տղիտութիւնը չբաւորութիւնն է պայմանաւորում, չբաւորութիւնը արգելք է հանդիսանում կրթութեան և այն:

ԺԱ.

Հիւանդները՝ ինչից ել որ առաջացած լինի նրանց հիւանդութիւնը, բժշկութեան են կարօտ. այդ է պահանջում անժխտելի, լուսի նման պարզ տրամաբանութիւնը:

Սովոր տեսակէտից ազգաբնակութիւնը սանիտարական գոհացուցիչ օգնութեամբ ապահովելը ամենաանեածգելի, ամենակարեար սանիտարական միջոցի բնոյթ է ընդունում:

Ի՞նք այլևս տարակոյս չմնայ, որ սոսկալի հիւանդացման ու մահացութեան արմատը թերակերութեան և տղիտութեան մէջն է, թողբուժական բժշկականութեան համար հիւանդութիւնների

նախազգուշացուցիչ միջոցները անհամեմատ աւելի կարեոր լինեն. սակայն իրողութիւնն այժմ այն է, որ ժողովուրդը հիւանդութիւնների է ենթարկւած, նրան անդադար տանջում են ամենատեսակ տարափոխիկ հիւանդութիւններ, հաշմանդամ են դարձնում և խեղում, զրկում են աշխատելու հնարաւորութիւնից, ուստի և ամենից առաջ նրան պէար է բժշկել և բժշկել:

Իրերի զրութիւնը յատկապէս ալնպէս է, որ անհրաժեշտ է ժամանակի ամենաքիչ կորուստով գործել, որովհետեւ ալգափիսի կորուստը անվերադարձնելի է: Անյապաղ օգնութիւն պէտք է հացնել հիւանդ և անհետ եկող ազգաբնակութեան:

Մենք արդէն տեսանք բժշկական օգնութեան թերութիւնները. զրանք ալնքան մեծ են, այնքան հեռու են նորմափից (բնական չափից), որ ազգաբնակութիւնը քիչ թէ շատ գոհացուցիչ բժշկական օգնութեամբ ապահովելը արդի պայմաններում երկարատեւ ժամանակամիջոց կրպահանջէ:

«Իմանալով և թանգ գնահատելով հանդերձ ընդհանրապէս գիւղի համար և մանաւանդ բժշկականութեան ասպարիզում զեմսափոների կատարածը — ասում է պրոֆ. Կապուտսինը — ալնուամենայնիւ պնդում եմ, որ գեռ ևս չափազանց քիչ բան է արուած»:

Միայն երեք զեմսափոյական նահանգներում մի զիւղական բժշկին հասնում է ոչ պակաս, քան 25 հազար բնակիչ. կան նահանգներ, որտեղ զեմսափոյի բժշկիլը 70 հազար բնակչի առողջութեանը

պիտի հսկի, և ալդ՝ չնայած բժշկական գործի վրայ զեմսավոլի կատարած մեծամեծ ծախսերին:

Բաւական է, եթէ հիւանդանոցներ լինեն, բժիշկներ կը լինեն ու կը լինեն. Տվեր նահանգի կաշ-լին գաւառի զեմսավոյական մի բժշկի վականսիալին խնդրատու էր եղել 92 բժիշկ. սրանից մօտ հինգ տարի առաջ Ախալցխայի քաղաքային հիւանդանոցի մի բժշկի վականսիան բռնել ցանկացողների թիւր ութի էր հասնում. երբեմն չբռնուած են մնում այն վականսիաները, որտեղ հիւանդանոց չկայ:

Կարեոր դեր կրկատարէ այսպէս կոչուած շարժական բժշկականութիւնը՝ թռուցիկ բժշկական խմբերի և շարժական բուժարանների ձևով:

Շարժական բժշկականութիւնը մի նորերեւով գործ չէ. ակնարոյժ խմբակներ մօտ տասլ տարի է, որ գործում են, այն էլ նկատելի յաջութեամբ:

Նոյնպիսի խմբակներ են կաղմակերպւում նաև սիֆիլիսի դէմ կռուելու. ենթադրութիւն կար նաև վիրաբուժական թռուցիկ խմբակներ կաղմակերպել:

Հայ-թրբական դժբաղդ ընդհարումներից յետով բժշկական թռուցիկ մի խումբ էր ուղարկուած Վարանդայ, որտեղ նա մեծ յաջողութեամբ էր գործում յօդուատ տարաբաղդ ժողովրդի վշտի ամոքման՝ տռանց ազգերի խարութեան. փառք ու պատիւ նրանց. սակայն մեր հասարակութիւնը չաշակցեց ալդ բարի գործին և խումբը, եթէ չենք

սխալում, միջոցների սպառման շնորհիւ, այլեւ գոյութիւն չունի:

Ոչ, մեր գիւղերում մշտական հիւանդանոցներ են պէտք, որոնք, ըստ մեզ, հեշտ է կազմակերպել. անհրաժեշտ է մօտ ութ հազարի մի գումար եօթ մահճակալով գիւղական մի հիւանդանոցի համար, որը տաս-տասներկու դիւղ միասին փոխադարձ երաշխաւորութեամբ պահել կարողանալին:

Գիւղացիք պարտաւորւում են տալ բժշկի և գիւղերու հի-մանկաբարձունու սոճիկը, հիւանդի խնամատարութեան համար ամսական 5—6 րուբլի. երթևեկ հիւանդների ընդունելութիւնը արժենալ տասից քսան կոպէկ, չքաւորներինը ծրի:

Թողլ եմ տալիս ինձ յայտնելու, որ Հին-Նախիշեանի և Ախալքալաքի գաւառի գիւղացիներից բազմիցս նամակներ եմ ստացել որոնցով իրանք են խնդրում գիւղական փոքր հիւանդանոցներ հիմնել այն պայմանով, որ կառուցման մօտ ութ հազար րուբլի ծախսը մի տեղից ճարուի, իսկ մնացեալ կարիքները իրանք հողան:

Այդ նամակների հիման վրայ այս տարի դիմել էի «Արամազգ» ընկերութեան մի քանի անդամներին, որոնք ուրախութեամբ խոստացան յիշեալ նպատակին նուիրաբերել ալդպիսի մի գումար, մանաւանդ, որ այդ ընկերութիւնը, ինչպէս յայտնի է, տարեկան բաւականին գումար է յատկացնում բարեգործական նպատակների:

Մենք մի քանի այդպիսի ընկերութիւններ ունենք. գրանք կարող էին գոնէ իրանց տարեկան

եկամտի մնացորդներից մի զումար լատկացնել վերին աստիճանի անհրաժեշտ և օգտակար այնպիսի հիմնարկութիւններին, ինչպիսիք դիւղական հիւանդանոցներն են:

Ես դիմել եմ առանձին անհատների, սակայն իմ խօսքերը մնացել են ձայն բարբառոյ լանապատի: Այդ անձինք մոռանում են, որ իրանց հաւաքած միլիոնները խեղճ ժողովրդի դառն քրտնքի արդիւնքն են կազմում:

Մենք յուսով ենք, որ Ս.-Պետերբուրգի հայոց եկեղ. Խորհուրդն ևս իր լուծան կրնուիրարերէ այդ բարի գործին, մանաւանդ որ նա վճռել է տարեկան մի քանի տարրական ուսումնարան բանալ մեր թշուառացած դիւղերում:

Հիւանդանոցները, բացի բուժական նշանակութիւնը, կունենան նաև կուլառուրական-կրթական ահազին նշանակութիւն:

Բժշկական ճիւղի մի քանի ուսանողներ արդէն տուել են մեզ իրանց համաձայնութիւնը՝ կրտսեր եղրօր ծառայելու, եթէ այդպիսի հիւանդանոցներ հիմնուեն. կրկնապատիկ ուրախալի է, որ հայրժշկուհին այդ ասպարիզում ռահվիրայ պիտի դառնալ . . .

Կրկնում ենք, գիւղական հիւանդանոցի համար բժիշկներ կրտսենուեն, եթէ միայն հիւանդանոցներ լինեն:

Մեր հասարակութիւնը պէտք է աշակցէ այդ բարի գործին, դիւղացիք իրանք պէտք է կազմակերպւեն, ժամանակը սուղ է, ահա թէ ինչի վրալ

պէտք է ուշադրութիւն դարձնեն մեր կուսակցութիւնները. չէ՞ որ զրանց մի թեր ամբողջապէս լուսաւորիչ ծեռնարկութիւններին է նուիրուած, հրատարակում է գրքեր, թերթեր և այլն:

ԺԲ.

Որքան էլ հեռու լինի զեմստվօն իգէալից, այնուամենայնիւ երկրի առողջացման շահերի տեսակէտից չի կարելի չցանկալ, որ զեմստվօն ամբողջ կայսրութեան մէջ տարածուած լինի:

Կարեոր է և վերին աստիճանի խելացի ու արդիւնալից զեմստվօյական կաղմակերպութեան սկզբունքը, որով ժողովրդական առողջութեան պահպանման համար առաջ է քաշւում հասարակական նախաձեռնութիւնը, գործին մասնակցելու են հրաւիրւում տեղական ոլժերն ու տեղական միջոցները:

Եթէ զեմստվօյի բժշկականութեան գործը ցանկալու դեռ շատ կողմեր էլ ունի, այնուամենայնիւ նրա մատուցած ծառայութիւնները բժշկական օգնութիւն հասցնելու գործում այնքան անտարակոյս են և ակնլայտնի, որ այդ ընդունում են նաև կառավարչական օրգանները, չեն ժիառում զեմստվօյի սկզբունքալին հակառակորդներն եւս:

Զեմստվօյական բժշկականութիւնը, ասում է պրոֆ. Երիսմանը, Ոուսասատանի համար մի գանձ է, որի նմանը չկայ Արևմտեան եւրոպայում:

Բացի բովանդակ կայսրութեան մէջ տարած-

ւելը, նկատում է իրաւացիօրէն զոկտ. Դադակը, զեմսավոյական և քաղաքային բժշկականութիւնը պէտք է կենարոնացնէ իր մէջ նաև գործարանածուլարանայինը, որ այնքան ողբալի վիճակի մէջ է գտնւում:

Գործարանա-ծուլարանային բժշկականութիւնը միմիայն գործարանատէրերին և բանւորներին վերաբերեալ գործ չէ, նրանում տիրող անկանոնութիւնները գործարանի սահմաններից շաա հեռու են զնում և անդրադառնում են շրջապատող աղդաբնակութեան սանիտարական մակերեսութիւնից վրայ:

Գործարանները այլեալ վարակումների, համաժարակների, բազմատեսակ պլոտիսիոնալ հիւանդացումների բուն են հանդիսանում. համաժարակի տարածումը գործարանից սովորական երեսով է. սիֆիլիսաւորներին, օրինակ, փոխանակ բժշկելու, գործարանից արծակում են:

Գործարանային բժշկականութիւնը իր ողբալի գրութիւնից հանելու համար պէտք է վերադառնալ այն գաղափարին, որը մեզանում ևս աւելի ու աւելի համակրութիւն է նուանում՝ բանւորների պարտաւորիչ ապահովագրութեան գաղափարին:

Ալգափիսի պայմաններում բժիշկը գործարարում կը լինի այն, ինչ որ պէտք է լինի, և ոչ թէ գործարանատիրոջ ծառան. կը լինի նրանից բոլորովին անկախ, աղատ իր նախածեռնութիւնների մէջ և անխափան լիազօրութեամբ օժտուած:

Անգլիայում գործարանային բժիշկները իրա-

ւունք ունեն հեռայնելու աւելի թոյլ կամ վտանգաւոր, արդիւնագործութիւնների վնասակար աղդեցութեան սաղմը կրող բանւորներին, աւելի յանախակի հերթափոխութիւն նշանակել, սանիտարական նախազգուշացուցիչ միջոցներ առաջարկել և այլն:

ԺՊ.

Ե՞րբ կ'իրականանայ մեզանում ալդ բոլորը. մեր առաջ ծառացած է մահուան տիսուր պատկերը միայն:

Աղքաբնակութեան բժշկական կարիքին լիովին գոհացում տալուց յետոյ (գիւղական հիւանդանոցներ), պէտք է եռանդուն ճիդ թափել յատկապէս երեխանների մահացութեան՝ մեր երկրի ալդ մեծագոյն սանիտարական չարիքի դէմ մղուած պատերազմում, չարիքի, որով կորչում է մեր ապագայ բարօրութիւնը, բանւորական և մտաւոր ոլժը:

Երեխանների մահացութեան դիխաւոր պատճառը նրանց անտանելի խնամատարութիւնն է, որի մասին արդէն լիշտակել ենք:

Չափազանցրած չենք լինի, եթէ ասենք, որ երեխանները էապէս հորթերից ել աւելի վատ են պահպանուած:

Խնամատարութեան թերութիւններից ամենից աւելի տուժում է երեխան այն ժամանակաշրջանում, երբ մայրը դուրսը պէտք է աշխատի, օրինակ ամառը:

Երեխաների մահացութեան դէմ ուղղուած կռուի ամենազօրաւոր միջոցներից մէկը — ինչպէս ցոյց են տալիս փաստերը — ալսպէս կոչուած, «մսուրն» է հանդիսանուած, այսինքն երեխաների ցերեկուայ ապաստարան, որաեղ թողնուած են նրանց մալրերը աշխատանքի զնալիս:

Մսուրի պահպանուածը բաւականին էժան է նստուած, արժեքաւոր պարագաներ չի պահնջուած և յարմար կրտեղաւորուի ամառները դատարկ մնացող դպրոցական շէնքերուած, որոնք, ի դէպ ասած, պարապմունքները սկսելուց առաջ պէտք է կարգին ախտահանել:

Վորոնէժի նահանգի մսուրներին երեխաների պահպանուածը օրական հնդից-տաս կոպէկ է նստուած և դրանց մէջ մահացութիւն կամ բոլորովին չկաչ և կամ գիւղի մահացութեան հետ համեմատած շատ չնչին է:

Երեխաների մահացութեան մի ուրիշ գործօնր ինոչ առողջութեան անբաւարար պահպանուածն է կազմուած, յղի կանանց չափից գուրս աշխատելը, ծննդաբերութեան ժամանակ բժշկական օդնութեան բացակայութիւնը, յետողաբերքային անկանոն շըրջանը, մալրերի վատ մննդառութիւնը, որով յանախ անընդունակ են զառնուած տղաներին սնուցանելու:

Կնոջ առողջութիւնը ցեղի առողջութեան ահ. կիւնաքարն է կազմուած. ցեղի առողջացուածը անհնար է առանց լրջօրէն և մշատապէս հոգալու, որ, կնոջ հնարաւորութիւն արուի իր օրդանիզմի

բնական պահնանչները հաշուի առնելու թէ իր, անձնական և թէ ապագայ սերունդի՝ երեխաների շահերի տեսակէտից:

Գիւղում պէտք է բաւարար չափով մանկարարծական օդնութիւն հասցուի կարիքաւորներին. գիւղական հիւանդանոցուած, բացի բժշկից, պէտք է մանկաբարձուհի-ֆելգչերներ ևս լինեն, հասկանալի է, որ — գիւղական պատրաստութեամբ:

ԺԴ.

Անհրաժեշտ են լուրջ և անյետածգելի միջոցներ ձեռք առնել դպրոցի սանհիտարական անբարեխաջող աղղեցութիւնը թուլացնելու և չեղոքացնելու համար, որին կարելի է հասնել, մի կողմից պարապմունքի ժամերի թիւը պակասցնելով և դասամիշոցները երկարացնելով, միւս կողմից ֆիզիքական վարժութիւնների կանոնաւոր սիստեմ, արհեստաներ, խաղեր և զբուանքներ մտցնելով:

Անհրաժեշտ է գուրս վանել դպրոցից հոգեկան ճնշող շարժումները:

Մտաւոր զարգացման և գիտութիւններ ձեռք բերելու պրոցեսը, երբ մտադ մտքի առաջ աւելի ու աւելի է բացւուած ցարդ անխալտի հեռանկարը, իր էութեամբ խոր հաճուքի աղբիւր է հանդիսանուած:

Ալգապիսի աղբիւր պիտի լինի ահա դպրոցական կրթութիւնը, որը, ի նախատինս ներկայ զա-

բու, յուզմունքների, հոգսերի և հիւանդութիւնների աղբւըր է կազմում:

Անհրաժեշտ է հիմնովին փոխել քննութիւնների բնութը, եթէ չի կարելի բոլորովին վերացնել. պէտք է թուլացնել պարզեների, տեղերի, թուանշանների մրցութեան արտաքին մղումները:

Դպրոցական կեանքին և գործունէութեան անմիջականօրէն մասնակցելու հրաւիրուած պիտի լինեն բժիշկներ, շխոսելով այն հանգամանքի մասին, որ նրանք մանկավարժական ժողովներում լիազօր երաւունքներ պիտի վայելեն:

Կաթուղիկոսի կարգադրութեամբ մեղանում հաստատում է արդէն թեմական տեսուչների պաշտօնը. մեզ թւում է, թէ նրանք էլ լիովին ծանօթ պիտի լինեն դպրոցական առողջապահութեան, և կամ աւելի գերազասելի կը լինէր նրանց հետ միասին բժիշկ ևս նշանակել ամբողջ Սնդրկովկասի բոլոր դպրոցների համար:

Բժշկական վերահսկիչները՝ անշուշտ բժիշկներից հրաւիրուած, պէտք է հսկեն ուսուցիչների և աշակերանների ֆիզիքական կրթութեան ու առողջապահութեան բոլոր կողմերին. այդպիսով բժշկական գործը աւելի ծեռնհաս անձնաւորութիւնների ծեռը կ'անցնէր. հասկանալի է, որ այդ բժշկական վերատեսուչների պաշտօնը միմիայն դա պիտի լինի: Մեզ համար առժամանակ զոնէ անհրաժեշտ է ընդամենը այդպիսի 2—3 բժիշկ:

ԺԵ.

Գործազրուղ և ծրագրուած սանիտարական միջոցների յաջողութիւնը ամենից առաջ հէնց իրա, աղջաբնակութեան մէջ է թաղուած:

Սանիտարական թերութիւնների դէմ անհնար է կոռուել առանց աղջաբնակութեան ակտիւ, կատարելապէս գիտակցական աշակցութեան:

Մէնք տեսանք, թէ աղջաբնակութեան անտեսական ցածր մակերեսոյթը՝ թերակերութիւնն ու սովածութիւնը ի՞նչպիսի սերտ կապակցութեան մէջ է սանիտարական անկանոնութիւնների հետ:

Մեր երկրի սանիտարական յառաջադիմութիւնը խափանող մի ուրիշ գործն ևս գոյութիւն ունի՝ դա ժողովրդի ազիտութիւնն է, որի մասին շատ անգամ է խօսուած:

Ունեորութիւնը, մինչեւ իսկ հարստութիւնը չի բացասում առողջապահութեան տարրական պահանջներին հետեւելու անհրաժեշտութիւնը:

Գիւղերում կարողութեան տէր գիւղացին ևս սովորաբար նոյնքան հակառազապահական կեանք է վարում, որքան և նրա չունեոր հարեանը. և միմիայն գիւղերումն են միթէ ունեորներն ու հարուստները ոտնատակ տալիս առողջապահութիւնը:

Թէ՛ հարուստը և թէ աղքատը հաւասարապէս ըիւ են տեղեակ, թէ ինչպէս պէտք է ապրել առողջ լինելու համար. դրանից անհրաժեշտօրէն

րդիում է կոիւ աղիտութեան դէմ՝ սանիտարական շահերի համար:

Այդ կռուի առաջին միջոցը զրագիտութիւնն է. նա բայ է անում մարզու առաջ խելացի և օգտակար գիտութիւնների աշխարհը. իսկ յետով զարիս են մասսալի մէջ մասնաւորապէս առողջապահական հասկացողութիւններ տարածելու յատուկ միջոցներ:

Այդ միջոցները կարելի է մացնել կեանքի մէջ կամ դպրոցի միջոցով և կամ այլ ճանապարհով՝ ընթերցանութիւնների, դասախոսութիւնների, զրոյցների և զրադարանների միջոցով:

Եթէ ընդհանրապէս դպրոցի նպատակն է իր սաներին ամենից աւելի կարեոր և օգտակար զիտութիւններ մատակարարել, այն ժամանակ դպրոցական առարկաների թւում տարրական առողջապահութեան ներմուծումը շատ պարզօրէն է վճռում:

Ի՞նչը կարող է աւելի կարեոր և օգտակար լինել, քան առողջութեան պայմանները իմանալը և հիւանդացումների կանխումը:

Առողջապահութիւնը կարելի է մացնել աւանդուղ առարկաների հաշուին. յետոյ, նրա դաստուանդումը չպիտի կապուած լինի դասեր տալու, թուանշանների և ընտութիւնների հետ:

Թող՝ առողջապահութեան դասերը աղատ զրոյցների ընութ կրեն. դաստուն ոչ միայն պատմում է աշակերտին և համոզւած վերջինների կողմից պատմուածի իւրացուած լինելու մէջ, այլև

ինքը պատասխանում է աշակերտների առաջարկած հարցերին:

Այս պայմանների մէջ միայն, առողջապահութեան դասերը — չժանրաբեռնելով աշակերաներին, նրանց համար յուզմունքի և վշտի աղբեւը չժառաբելով — կ'իւրացուեն իրանց պարունակած զիտութիւնների օգտակարութեան համար, զիտութիւնների, որոնք յետագայում գործնական կեանքի մէջ ևս կը կիրառուեն:

Անօգուտ չէր լինի, եթէ դասարանային ընթերցանութեան յատկացուած գրքերում, որոնք լի են շրջապատող իրականութեան հետ շօշափման ամենաշեռաւոր կէտեր անդամ չունեցող բազմազան նիւթերով, մի փոքր տեղ տրուէր նաև առողջապահական զիտելիքներին:

Ժողովրդական ուսուցչի համար անհրաժեշտ են սանիտարա-բժշկական տեղեկութիւնները հինյ զուտ գործնական տեսակէտից՝ նրան շատ անդամ պէտք է գալիս հիւանդին, մանաւանդ վարակուածին առողջից չոկել:

Կարեոր է առաջին օգնութիւն հասցնեն իմանալ և մեղ թւում է, թէ «Առողջապահիկ»-ի տուած օգուտը կը կրկնապատկուէր (այս օրեքս կը վերասկսուի այդ բազմօգուտ թերթի հրատարակութիւնը նոր կազմով), եթէ խմբագրութիւնը երկու սեռերի համար ևս գասընթացներ բանար. հարկաւ, առանձին բժիշկներ էլ կարող կը լինեին ալդպիսի հանրողուտ գասընթացներ հիմնել:

Շատ տեղեր մացրած են արդէն ընթերցանու-

թիւններ և զրոյցներ բժշկական նիւթերի մասին, մնում է միայն գործը օրինական հաստատ հողի վրայ դնել և բժիշկներին հնարաւորութիւն տալ այդ զրոյցներին ցուցական պատշաճ կողմերն և աւելացնել, այսինքն՝ պատմածին ուղեկցել պատկերներ, մանրացոյց և այլն:

Քիչ է միայն առողջապահութիւն աւանդել, անհրաժեշտ է հաղորդել նաև մարմնակազմութեան և ֆիզիոլոգիալի հիմունքները, դժբաղդ դեսպերում մինչև բժշկի գալը սկզբնական օգնութիւն հասցնելու, նոյնպէս և աշխատանքի առողջապահութեան տարրերը:

Եւ աշխատանքի առողջապահութիւնը շատ կարեոր է ուսումն և գաստիարակութիւն կազմակերպելիս, երբ յարգանքը, սէրն և վարժութիւնը դէպի աղատ, գիտակցական աշխատանքը ամեն օր, ամեն ժամ իւրացնելիս լինեն սաները:

ՃԶ.

Որ մեղ գիւղական հիւանդանոցներ են պէտք, զրա մասին խօսք լինել չի կարող. զրանք պէտք է մեր դոցութեան անկիւնաքարը համարուեն. քաղաքներում գեռ մի կերպ կարելի է բժշկներ զրանել. իսկ զիւղերում թէւ բժշկի անունն էլ չկայ՝ սակայն դոցին եթէ գիտակցաբար վերաբերունք, կրլինեն թէ՛ հիւանդանոցներ, թէ բժշկներ և թէ մանկաբարձուհիներ:

Սանկտարական գործը համարում է շրջա-

պատի հետ շատ քիչ առնջութիւն ունեցող նեղ և երկրորդական մի մասնագիտութիւն՝ որոշակի սահմանագծուած կեանքի միւս ասպարէզներում:

Բժշկը միայն հիւանդներին է հարկաւոր և նա մի միայն պէտք է բժշկէ ու բժշկէ, այսինքն գեղատոմսեր զրէ — ահա բժշկի և նրա կոչման մասին աիրող համատարած հայեացքի ամփոփումը:

Այս տեսակէտից բժշկական աշխատանքը իր ծաւալով աւելի լայն չէ, քան ուեկ' ժամագործի աշխատանքը:

Բոլորովին նիշտ չէ, թէ բժշկը մի միայն հիւանդներին է պէտք, բուժական բժշկականութեան համար անսահման կարեորութիւն ունեն հիւանդութիւնների նախադգուշական միջոցները:

Սկզբունքային տեսակէտից աւելի արդիւնալից է պահպանել առողջութիւնը, առողջներին, քան հիւանդներին բժշկել հէնց այն պատճառով իսկ, որ վերջին աշխատանքը — մինչև անգամ բժշկականութեան ներկայ զարգացած վիճակում — յաճախ ապարդիւն է անցնում:

Այնքան էլ հեշտ չէ հիւանդի առողջութիւնն և աշխատանքի ընդունակութիւնը վերականգնել, ինչպէս որ կարող է թուալ և թւում էլ է:

Բնութիւնը, մարդուն առողջութեան անգին պարզեր շնորհելով, վերին աստիճանի նախանձախնդիր է նրանով օգտուելուն և երկրորդ անգամ հեշտութեամբ չի օժտում նրան, ով մի անգամ ստանալով, չի կարողացել պահպանել:

Թող հիւանդը բժշկուած լինի և նրա առող-

չութիւնը վերականգնած, սակայն ով կրվերադարձնի նրան հիւանդութեան վրայ կորցրած ժամանակը և նրանից անբաժան նիւթական վնասը:

Հէնց այդ պատճառով էլ բժիշկը առողջներին և նոյնքան է անհրաժեշտ, որքան և հիւանդներին. այս իրաւացի և լայն տեսակետից խորախորհուրդ է հանդիսանում չինական այն սովորութը, որով ոչ թէ հիւանդութեան օրերի համար են վճարում բժիշկներին, այլ առողջութեան:

Բժշկել, այն էլ յաջողութեամբ բժշկել միայն գեղատոմսեր գրել չի նշանակում երբէք. բժշկել նախ և առաջ նշանակում է վերացնել հիւանդացումների այն պատճառներն ու պայմանները, որոնք անչափ քանակութեամբ արմատացած են մեր կեանքում:

Ի միշի այլոց նրա վրայ է հիմնուած նաև այն սկզբունքի մի կէտը, որով ամուսնացողը պսակւելուց առաջ իր առողջութեան մասին բժշկական վկայական պէտք է ներկայացնի պսակողին:

Արդի բժշկականութեան մէջ գեղատոմսով, այսինքն այլեայլ գեղերով բժշկելը աւելի ու աւելի տեղի է տալիս ամենազօր բուժիչ՝ բնութեան առաջ, նրա հրաշագործ հմայքների հետ միասին, ինչպիսիքն են օդը, լոյսը, ելեքտրականութիւնը, ջուրը, խօսքի ուժը՝ ներգործումն և այլն. գեղերին աւելի ու աւելի լաճախ են փոխարինում համապատասխան բեժիմը, պահեցողութիւնն և կիման:

Բժշկի խնդիրները զգալի չափով կերպարանափոխում են, աւելի լայն են դառնում. դրանք

իրականացնելիս միայն գեղատան հետ չէ, որ լնդհարւում են բժիշկները, այլ շրջապատի բովանդակ կեանքի հետ, որի պայմաններն են կաղմում, ինչպէս լիշել ենք, մեր հիւանդութիւնների մեծամասնութեան աղբիւրը:

Բժիշկը պէտք է կոռւի այդ պայմանների գէմ, վերջիններս վերաշինելով և այլպիսով թեթեացնելով այն ուղին ու ծեւերը, որոնք տանում են բնութեան բուժիչ ուժերի հիւանդի վրայ անմիշականօրէն ներդործելուն:

Բժշկական գործունէութիւնը մի նեղ մասնագիտութիւն չէ, այլ հասարակական ծառակութիւն, որը շօշափում է կեանքի մնացած բոլոր կողմերը և թափանցում նրանց մէջ:

Բժշկը ամեն գործին պիտի խառնուի և նրա ծալնը աւելորդ ու անազգեցիկ չպիտի լինի հասարակական կեանքի բազմազան հարցերում, առաւել ևս նրանցից կարևորներում:

Բժշկականութիւնը, ասում է բժիշկ Վերեսակը, ուրիշ ոչինչ չի կարող անել, բայց եթէ մատնացուց անել այն պայմանները, որոնց ներկայութեամբ միայն հնարաւոր է մարդկանց առողջութիւնը և բուժելը:

Բժշկը ամենից առաջ պէտք է կոռւի այն պայմանների վերացման համար, որոնք նրա գործունէութիւնը անիմաստ և անպտուղ են դարձնում. նա պէտք է հասարակական գործիչ լինի խօսքի ամենալայն իմաստով, նա պէտք է ոչ միայն լոկ մատնացուց ամէ, այլև կորիւ մղէ և դանէ.

ուղիներ՝ իր ցուցմունքները կեանքի մէջ իրականացնելու համար:

Առողջութիւնը մարդկալին ամենաթանգագին պարզեց լինելով հանդերձ, մարդկալին դործունէութեան գլխաւոր և գերազոյն գործոնն էլ է, առանց որի անհնարին է այդ գործունէութիւնը:

Առողջութեամբ պայմանաւորւում է տնտեսական բարօրութիւնը, լուսաւորութիւնը, ամբողջ կուլտուրան: Հիւանդ մարդը ոչ սովորել կարող է ոչ բարեկեցութիւն ծեռք բերել, որի աղբիւրը աշխատանքն է կազմում. իսկ վերջինս մատչելի է միմիայն առողջին:

Ուստի և բժիշկը ոչ թէ անտեսական գործչի և ուսուցչի լետեկից պէտք է զնալ՝ իր գործունէութեան համար հող պատրաստուելուն սպասելով, այլ նրանց առջեկից՝ այդ հողը ուրիշների համար պատրաստելով:

Ուստի ինչ էլ որ լինի պէտք է զիւղական մշտական հիւանդանոցներ հիմնուեն. ընկերութիւններ, առանձին հարուստ և բարեսիրտ անձնաւորութիւններ չեն կարող հիւանդութիւններին և նրանց հետ կապուած վնասներին անտարբերութեամբ հանդիսատես լինել և չպիտի լինեն:

Հասարակութիւնը, ամբողջութիւնն է պարտաւոր գործը այնպէս տանել, որ ոչ մի հիւանդ առանց բժշկութեան չմնալ:

Բժշկական օննութիւն հասցնելու գործը պէտք է մասնաւոր նախածեռնութեան, անձնական բարեսրտութեան ներ շրջանակից հանել հասարակա-

կան գործունէութեան, հասարակական պարտականութեան լայն ուղին:

Զի կարելի թոյլ տալ, որ մարդիկ հիւանդութիւն քաշեն առանց բժշկուելու, ինչպէս անթոյլատրելի է, որ սովածան լինեն կամ սառչեն փողոցներում:

Մեր երկրի առողջացման գործը չի ունենալ իր ասկը պատշաճ հող, քանի դեռ ընդհանուր բնդունելութիւն չի զաել այն ծշմարտութիւնը, թէ ժողովրդական ասողջապահութիւնը երկրի բաղաքական զօրութեան, նրա մտաւոր և տնտեսական զարգացման անկիւնաքարն է կազմում, որ սանիտարական կարիքները ոչ թէ երկրորդական, այլ ամենակենսական և խկական — պետական պահանջներ են, որոնց գոհացումը համապատասխան կարեռը արդիւնքը կարող է տալ:

Ժողովրդական առողջութեան մակերեսութիւնը բարձրացումը ժողովրդական բաղդաւորութեան մակերեսութիւնը բարձրացնելու ամենավստահելի միջոցներից մէկն է կազմում . . .

Օրէնսդրութեան մէջ — ասում է Վիենամ Լեկի անդիխացին — ամենաարժեքաւորը պէտք է համարել այն կէտերը, որոնք ժողովրդական առողջապահութեան հոգսերին են նուիրուած՝ արտայալտւած լինեն դրանք զիւտերի բաշալերմամբ կամ՝ բանւորական (աշխատաւոր) մասսալի համար սանիտարական առողջ պայմաններ ապահովելու նպատակով — բժշկական խորհուրդների տարածման խրախուսմամբ:

ԺԷ.

Այս բոլորի իրականացումը, մեր կարծիքով,
կարագացնէ զեմստվօլական մանր միութեան հաս-
տառումը, իսկ մենք հասարակ զեմստվօ անդամ
չունենք:

Ի՞նչ բան է ուրեմն զեմստվօն և զեմստվօլա-
կան մանր միութիւնը *):

Կար ժամանակ, երբ Ռուսաստանում տեղա-
կան բոլոր հասարակական գործերը՝ նոյն իսկ ամե-
նափոքերը, պաշտօնեաների (չինովնիկ) ձեռին էր:

Դպրոց է պէտք մի տեղ կամ հիւանդանոց և
կամ կամուրջը նորոգել է պէտք — այդ մասին
երբէք չին հարցնում տեղացիներին, որոնք տեղա-
կան գործերին աւելի էին տեղեակ, այլ պաշտօ-
նեաները թուղթ էին զրում գիւղից գաւառական
քաղաք իրանց զլխաւորներին, զաւառական քա-
ղաքից նահանգականը, այնտեղից էլ Պետերբուրգ:

Հաղար ու մի թոլլուռութիւններ էին իրն-
դրում, թղթերի ահազին կոյտեր էին մրոտում.
մի պաշտօնեալից միւսին էին գնում ամենաանակ
յախաղրութիւններ, տնօրինութիւններ, հարցա-
պնդումներ, պատասխաններ, տեղեկութիւններ . . .
և այդպէս տարիներով ձգձգուում էր թղթագրու-
թիւնը:

*) Տե՛ս Քելոկոնսկու գեղեցիկ գրքովկը. «Ի՞նչ է
զեմստվօն, ինչ է արել ժողովրդի համար և ինչպէս պէտք
է լինի»; Այս գիրքը պէտք է հազարներով տարածել
ժողովրդի մեջ

Պաշտօնեաները կանոնաւոր կերպով ստանում
էին իրանց ոռնիկները, առատօրէն զրոտում էին
թղթերը, իսկ տեղական դործերը կաղ էի ըն-
թանում:

Պաշտօնեաները աեղացիներին չէին հարցնում,
քննում. իշխանութիւնը, իբրև թէ առանց նրանց
էլ իմանում է իր անելիքը. իսկ եթէ տեղացիները
երբեմն ասում և ցոլց էլ էին տալիս ինչպէս և
ինչ պէտք է անել՝ առաջ էր գալիս զործի երկար
ու բարակ ձգձգումն և ահազին թղթագրութիւն:

Ժողովրդից հաւաքւում էր փող, զործադրուում
էր տեղական գործերի և կարիքների վրայ, սակայն
այդ բոլորը կատարում էին պաշտօնեաները՝ գան-
դաղ և կամաց, առհասարակ չինովնիկաբար:

Ժողովուրդը զուրկ էր լուսաւորութիւնից,
օպնութիւնից և իրաւունքից. Իուսաստանի համար
զժբաղդ Սևաստոպոլի պատերազմից լետոյ միայն
(1856 թ.) փոփոխութիւններ սկսուեցին ամբողջ
պետութեան մէջ:

1861 թ. փետրուարի 19-ին ազատեցին զիւ-
գացիներին կարուսծատէրերից և այդպիսով վերա-
ցաւ նախատական և ժողովրդի համար ատելի նոր-
տական իրաւունքը:

Մացուեց արդար, արագ և ողորմած գատա-
տան. կազմակերպուեցին ընտրովի հաշտարար զա-
տաւորներ, զատավարութիւնը կատարուում էր տե-
ղացիներից զուրս եկած երգուեալ հաւատարմա-
տարների մասնակցութեամբ և այն:

1864 թուին հաստատուեց զեմստվօն — տե-

զական գործերի և կարիքների վերահսկողութիւնը
յանձնուեց ազգաբնակութեան ընտրած տեղայի-
ներին:

Դա լուսաւոր, փայլուն մի ժամանակաշրջան
էր, ոսւս ժողովուրդը կարծես զարթնեց իր խոր
քնից և բոլոր լաւագոյն անձինք շտապում էին
ընդհանուրի օգտի համար աշխատելու, աշխատում
էին չինովնիկական տնտեսութեան նախկին սխալ-
ները ուղղել, ժողովրդական կեանքը բարւորել:

Գործի ձեռք զարկին նաև զեմստվոյական
հիմնարկութիւնները:

Դրանց համար ընտրւում էին տեղայինները՝
թէ կալուածատերեր, թէ՛ քաղաքացիներ և թէ
գիւղացիներ. ընտրւում էին ծայնաւորներ, գումար-
ւում էին գաւառական և նահանգական զեմստվոյա-
կան ժողովներ, քննում և վճռում էին տեղական
կարիքներն ու գործերը:

Զեմստվոյի առաջին ծայնաւորները մեծ մա-
սամբ, ընտիր, ազնիւ մարդիկ էին, որոնք իրանց
ոլժերով ցանկանում էին բարւորել ոչ միայն տե-
ղական գործերը, այլև ոռուական ամբողջ պետու-
թեան կեանքը ընդհանրապէս:

Զեմստվոյական տնտեսութիւնը տեղական ընտ-
րեալ անձնաւորութիւնների ձեռին սկսեց արագօրէն
բարւորել և զարգանալ:

Հիմնուեցին դպրոցներ, հիւանդանոցներ, հրա-
ւիրուեցին բժիշկներ, ֆելզշերներ, ուսուցիչներ,
աւելի կանոնաւոր էին մասնադրւում ազգաբնակու-
թեան հարկերն ու տուրքերը, միջոցներ էին ձեռք

տանւում զիւղատնտէսութիւնը զարգացնելու, նո-
րագւում էին կամուրչները, ճանապարհները, հաս-
տաւում էր կանոնաւոր պոստալին հազորդակ-
ցութիւն և ալին:

Ամեն բան կատարւում էր բաց և հրապա-
րակօրէն, տեղական կարիքների համար ազգաբնա-
կութիւնից հաւաքուած փողերը հաշւում էին և
ծախսերը սառւ գւում:

Հէնց այդ ժամանակ զեմստվոյի լաւագոյն
ծայնաւորները ցանկանում էին լայնացնել զեմստվոն,
որ բաղմաթիւ թերութիւններ ունէր. վերջին-
ներից երկուսն ամենազիստաւորներն էին:

Առաջին թերութիւնը այն էր, որ զաւառա-
կան և նահանգական զեմստվոնները այնուամենայ-
նիւ հեռու էին բուն ժողովրդից:

Գաւառական զեմստվոյական ժողովում ամ-
բողջ գաւառի ծայնաւորներն էին հաւաքում և
պարապում էին գաւառի գործերով:

Սակայն գաւառը յանախ շատ մեծ է լինում
և բոլոր ծայնաւորները՝ նոյն խսկ միենոյն գաւա-
ռի — չէին կարող իմանալ և չէին էլ իմանում
այս կամ այն զիւղաշրջանի, այս կամ այն գիւղի
կարիքները:

Գաւառական ծայնաւորների թիւը 40—50 է
լինում, այն ինչ զաւառներում ապրում է 60,
100, 200, մինչև իսկ 300 հազար հոգի. հետեւ-
պէս ամբողջ ազգաբնակութեան չնչին մասին է
միայն վիճակւում աշխատել զեմստվոյի գործերում:

Բայց ծայնաւորներն էլ անկանոն էին ընար-
ւում՝ ոչ ամբողջ ազգաբնակութեան ձեռովի:

Գաւառական զեմստվօյական ժողովի յանձնա-
րաբութեամբ գաւառի զեմստվօյական դորձերը
գաւառական զեմստվօյական վարչութիւնն է կա-
տարում, սակայն վերջինս բաղկացած է ընդամենը
3—4 հոգուց, որոնք շատ դժուարութեամբ են
զլուխ բերում գործը, իսկ յաճախ բոլորովին ան-
կարող են լինում:

Ինքը ազգաբնակութիւնը, ժողովուրդը շատ
չեռու է զեմստվօյից, շատ քչերն են մասնակցում
զեմստվօյական աշխատանքներին, իսկ խուլ և յետ
ընկած զիւղերում շատերը ծինչե իսկ դադափար
չունեն զեմստվօյի մասին:

Գիւղական և զիւղաշրջանալին (վոլոստնոյ)՝
տեղական մանր գործերը առաջուալ նման վատ են
վարւում:

Այդ թերութեան պէտք է աւելացնել նաև
այն, որ ծախսերը (օրինակ՝ դատարանալին, ոսակ-
կանական պարտաւորութիւնների), հարկերը ոչ թէ
զիւղաշրջանի բոլոր բնակիչներից են գանձում, այլ
միայն զիւղացիներից — չէ՞ որ դա ծանր է և
անիրաւացի:

Այդ առաջին մեծ թերութիւնը ուղղելու,
զեմստվօն՝ այսինքն տեղական գործերի հսկողու-
թիւնը զիւղական ազգաբնակութեան մօաեցնելու
համար նահանգական և դատառական զեմստվօնե-
րից զատ զիւղաշրջանալին զեմստվօ ևս պէտք է
չիմնել, որտեղ ծախսերին մասնակցելիս լինէին

զիւղաշրջանի բոլոր բնակիչները, բոլոր դասերը.
մի խօսքով պէտք է հիմնել մանր զեմստվօ կամ
զեմստվօյական մանր միութիւն:

Այդպիսով էին ուզում ուղղել զեմստվօյի լա-
ւագոն ծայնաւորները զեմստվօյական կազմակեր-
պութեան առաջին թերութիւնը:

Երկրորդ թերութիւնը աւելի էր կարեար.
չինովնիքական թղթագրական տնտեսութիւնից յե-
տոյ ոչ միայն տեղական, այլև պետական բոլոր
գործերը, օրէնքները պէտք էր ուղղել այսինքն՝
կազմել համառուսական մեծ զեմստվօյի նման մի
րան:

Ժողովրդի ներկայացուցիչները աւելի շուտ և
լաւ գոհացում կրտալին համառուսական ժողո-
վրդական կարիքներին — այսպէս էին ասում զեմ-
ստվօյի լաւագոն ծայնաւորները նրա գոյութեան
առաջին տարիներին, սակայն նրանց խօսքերը,
նրանց առաջարկութիւնները երկար տարիներ ան-
իրագործելի մնացին:

Խիզախ և գաղափարական շատ անձինք դրա
համար պատժի ենթարկուեցին. մի քանի պաշտօ-
նեաներ ել ուզում էին զեմստվօն բոլորովին վերաց-
նել կամ գոնէ վնասել նրան:

1890 թուականին զեմստվօյի իրաւունքներից
շատերը խլուեցին, օրինակ ազնուականութիւնն ա-
ւելի աեղ արուեց, քան միւս բոլոր դասերին միա-
սին. զեմստվօյական վարչութիւնները ենթարկուե-
ցին նահանգապետին և վարչութեան անդամները

իրաւունք ունէին ուեկ գործ կատարել, եթէ նահանգապետը հաստատէր:

Զեմստվօյին արգելեցին մինիստրի նշանակածից աւելի տարեկան ծախս անհել յետոյ խլեցին նրանից մատակարարութեան գործը և ալլն:

Նատ տարիներ անցան այդ ժամանակից և Մեծն Ռուսիայի զլիսից շատ բան անցաւ ու ռուսնապոնական գժբաղդ պատերազմից յետոյ ուժապառ ժողովրդի մէջ լուղձունքներ և խռովութիւններ սկսուեցին. այդպիսով քայլքայուեց պետական տնտեսութիւնը. վճռուեց ժողովրդի ընտրեալներին Պետական Դումա հրաւիրել Ռուսական Պետութիւնը նորոգելու ու ամրապնդելու և ժողովրդի կարիքները քննելու ու լուծելու:

Ռուսաստանի լաւագոյն անձինք՝ ժողովրդի ընտրեալները հենց առաջին Պետական Դումայում սկսեցին քննել բոլոր գործերը և մատնացոյց էին անում բոլոր կարեորագոյն կարիքները՝ և՝ ժողովրդի չքաւորութիւնը, և՝ սակաւհողութիւնը, և՝ խաւարն ու անզրագիտութիւնը, իրաւագրիութիւնը, վատ դատավարութիւնը, թերի զեմստվօն և ալլն և ալլն:

Առաջին Պետական Դուման անկարող եղաւ պաշտօնեաների դէմ կոիւ մղել և շուտով լուծուեց:

Երկրորդ անգամ գումարուած Պետական Դումայում ժողովրդի ներկայացուցիչները նորից խօսք բաց արին նոյն խնդիրների մասին և կրկին նոր օրէնքներ առաջարկեցին ժողովրդի դրութիւնը բարոքելու, զեմստվօն դարձեալ բարեկարգելու:

Նոյնիսկ կառավարութիւնը ինքը առաջարկեց զեմստվօյի նման գիւղական վարչութիւններ հաստատել և Դումային դրա օրինագիծը ներկայացրեց. սակայն պատգամաւորներից շատերին այդ օրէնքը ժողովրդի համար շատ պակասաւոր և անհամապատասխան թուաց. շուտով երկրորդ Դուման ևս արծակուեց և ժողովրդական մեծամեծ կարիքները չգոհացուած մնացին:

Ինչ էլ որ լինի, զեմստվօյական մանր միութիւնը պէտք է ժողովրդի սրտին մօտիկ լինի և մատչելի. պէտք է կանոնաւոր և արդարացի հարկահաւաքութիւն սահմանել. առհասարակ անհրաժեշտ է, որ զեմստվօյական մանր միութիւնները լինեն աղատ, ինքնավար, անդասակարգային, վարեն տեղական բոլոր գործերը լողուտ աղդաբնակութեան՝ իբրև մեծն հալրենիքի հարազատ զաւակ:

Դժուար է գուշակել, թէ ի՞նչ կրկատարուի երրորդ Դումայում, սակայն վերովիշեալ՝ այսինքն խոստացուած աղատութիւնների, տեղական ինքնավարութեան և մանր զեմստվօյի իրականացումը պահանջում են երիտասարդ և զօրաւոր Ռուսաստանի շահերը:

Այդ դէպքում միայն թէ պետական և թէ զեմստվօյական տնտեսութիւնները իրանց կանոնաւոր, պատշաճ ընթացքը կրստանան և ժողովրդի օպտին կրծառակեն:

ԺԵ.

Չնայած ոռւսական զեմստվօլի բոլոր թերութիւններին, նրա գործունէութեան դէմ յարուցած սահմանափակումներին և ննշումներին, չնայած վերջապէս ոչժի համարեալ կատարեալ բացակայութեան և ոռւսական կեանքի ժանր պայմաններին ընդհանրապէս — ոռւսական զեմստվօն հրակալական օգուտ է մատուցել հայրենիքին:

Տնտեսութիւնը, հասարակական գործունէութիւնը, ճանապարհները, ժողովրդական կրթութիւնը, բժշկականութիւնը, ասպահովագրութիւնը և այլն և այլն զեմստվօյական նահանգներում անհամեմատ աւելի բարձր են, քան զեմստվօլից զուրկ նահանգներում:

Զեմստվօյական հաստատութիւնները շատ ծախսերի մէջ աւելի տնտեսութիւն մտցրին, քան պետականները, բարձրացրին եկամուտը՝ ազգաբնակութիւնը նոր հարկերով չծանրաբեռնելով. նրանք մշտապէս դէմ են կանգնել անարդար հարկերին և թիւ չեն նպաստել դրանց վերացման:

Գիւղական կարիքները զեմստվօլի ամենազլիխաւոր հոգսերից մէկն էին կաղմում և նա տնտեսութիւնը բարւոքելու այլկայլ միջոցներ էր ձեռք առնում, հիմնում էր պահեստանոցներ, օրինակելի դաշտեր, հաստատում էր հողագործալին վերահսկիչների պաշտօններ, զիւղատնտեսական խորհուրդներ և այլն:

Տնայնաղործութիւնը՝ շնորհիւ զեմստվօլի, որը

թանգարաններ, պահեստարաններ էր հիմնում, վաճառք էր կաղմակերպում և այլն — ոչ միայն չէր ընկնում, այլև մշտապէս զարգանում էր և օր աւուր աւելի ու աւելի է առաջադիմում, Եւրոպալից, Ամերիկայից մեծամեծ պատուէրներ են տրւում:

Բայց ամենից շատ գործ կատարեց զեմստվօն ժողովրդական կրթութեան, բժշկականութեան և ազգաբնակութեան կուլտուրական մակերևոյթի բարձրացման ասպարիզում:

Զեմստվօն ուղղակի ոչնչից գպրոց ստեղծեց, ապահովագրութիւն մտցրեց, մանր փոխատութիւն կաղմակերպեց, դիտական վիճակագրութիւն մրացրեց — դա զեմստվօլի հպարտութեան առարկաներից մէկն է:

Զեմստվօն ոչ միայն ժողովրդի կուլտուրական զարգացման դպրոցը դարձաւ, այլև նրա քաղաքական զաստիարակութեան ուսուցիչը, և աղետաբեր տարիներին անփոխարինելի մի օրգան էր հանդիսանում:

Զեմստվօլի տուած արդիւնքը անհամեմատ աւելի մէծ կըլինէր, եթէ նա բնական պայմաններում գտնուէր, իսկական ինքնավարութիւն լինէր, և ոչ թէ նրա նմանողութիւնը միայն:

Զպէտք է նաև մոռանալ, որ զեմստվօնների խնդիրներից և միջնորդութիւններից շատերին կառավարութիւնը գոհացում չէր տալիս, իսկ շատերը նոյնիսկ անպատճախան էր թողնում:

Եւ իսկական զեմստվօ ասելով պիտի հասկականանք անկախ և լայն ինքնավարութիւն, որին կանանք

մասնակցելիս լիներ իր ընտրեալների միջոցով որոշ տեղի ամբողջ ազգաբնակութիւնը:

Որոշ վայրի իւրաքանչիւր բնակչին չեն կարող օտար լինել տեղական շահերը. վերջիններս նրա սրտին մօտ են և թանդ, ուստի և ոչոք չպիտի հեռացուի զեմստվոյի դործերից:

Աւելի ևս. զեմստվոյավարութեան մասնակցելը ոչ միայն իւրաքանչիւր քաղաքացու անձեռնմխելի իրաւունքն է, այլև սրբազն պարտականութիւնը:

Որպէսզի զեմստվոյական հիմնարկութիւնները պատշաճ կերպով կարողանան կատարել իրանց պարտականութիւնները, նրանք անկախ պիտի լինեն, այսինքն կառավարութիւնը չպիտի խառնուի նրանց գործունէութեան՝ բացառութեամբ, ի հարկէ, այն դէպքերի, որոնք նախատեսնուած են հիմնական օրէնքներով:

Ու կառավարութեան և զեմստվոյի միջև տեղի ունեցած բոլոր վէճերն ու հակաճառութիւնները պէտք է յանձնուեն երրորդ անկախ հիմնարկութեան՝ դատարանի քննութեան:

Զեմստվոն պէտք է վարէ տեղական բոլոր գործերը և ոչ թէ լոկ տնտեսութիւնները. նա պիտի հակէ նաև կառավարութեան տեղական գործերին:

Զեմստվոն մօտիկ պիտի լինի ազգաբնակութեան, օրովհետեւ հնարաւորութիւն չկայ մալրաքաղաքից, նոյնիսկ նահանգական քաղաքներից տեղեկանալու ուեւ տեղի շահերն ու կարիքները և դրանց բաւարարութիւն տալու, ուստի, կրկնում

ենք, զեմստվոյական մանր օրդաններ՝ զեմստվոյական մանր միութիւն է հարկաւոր:

Անտարակոյս, ամեն ինչ օրէնքի կողմից նախատեսուած պիտի լինի, օրպէսզի պետական հաստատութիւններ հանդիսացող զեմստվոյական հիմնարկութիւնների անկախութիւնն և ինքնուրոյնութիւնը չխախտուի:

Այդ բոլորը, ի հարկէ, այն դէպքում, երբ կիրականանայ անծի անձեռնմխելիութիւնը, խոսքի, մամուլի և ժողովների ազատութիւնը՝ առհասարակ յալտնի մանիթեսակ խոստումները:

Ժողովրդական ներկալացուցչութիւնը միայն՝ ընտրուած ընդհանուր, ուղիղ, հաւասար և գաղտնի քուէարկութեամբ, կարող է ապահովել պետական օրդանների և ինքնավարութեան միջև փոխագարծ վստահութիւն և սերտ միութիւն. նա միայն հող կըստեղծի օրէնսդրութեան կանոնաւոր և համաչափ զարգացման և դիմացկունութիւն կըտայ տեղական ինքնավարութեան:

Իսկ պետական հիմնարկութիւնների կենտրոնական և գաւառական օրդանների համերաշխ գործունէութիւնը՝ հաստատուած հասարակական ոլժմերին տածուած վստահութեան վրայ, կ'ամրապնդէ ժողովրդի բարեկեցութիւնը և կեանքի մէջ իրաւունքի, օրինականութեան ու արդարութեան սկզբունքները կըմտցնէ:

Իսկ մեղանում զեմստվոյական մանր միութիւնները պէտք է որոշ գաշնակցութեամբ կա-

պակցուեն և նրանց ներկայացուցիչները իրաւունք պիտի ունենան տեղական տնտեսութեան հարցերի մասին համաժողովներ կազմակերպել:

Ուրիշ երկրներում ևս գոյութիւն ունի մանր զեմստվո. մի քանի խօսքով կանգ առնենք Անդ-լիալի վրայ:

ԺԹ.

Բուն Անդլիան, որտեղ անդլիացիք են ապրում, 52 կոմսութիւնների է բաժանւած, որոնք համապատասխան են գաւառական զեմստվո ունեցող մեր գաւառներին: Կոմսութիւնները բաժանւած են շրջանների, որտեղ գոյութիւն ունեն զեմստվոյական մանր հաստատութիւններ, իսկ շրջանները բաժանւում են ծխերի, որտեղ գործում են արդէն բոլորովին մանր զեմստվոներ:

Այդ ծխերում կամ գիւղերում երբեմն շատ քիչ բնակիչ է լինում, սակայն իւրաքանչիւր փորձիկ գիւղ անգամ առանձին ծխական զեմստվո է կազմում, մի առանձին զեմստվոյական աշխարհ:

Թո՞ղ գիւղում հարիւր հոգի լինի, դա միենոյնն է. օրէնքը նրանց իրաւունք է տալիս իրանց կարիքները անկախօրէն հոգալու, գրացի գիւղերի հետ միութիւն կազմելու և ընդհանուր ոչմերով իրանց հասարակական կեանքի պայմանները բարւորելու:

Անդլիայում 13 հազար գիւղական ծուխ՝ ալսինքն մանր զեմստվո կալ:

Գիւղական այդ մանր զեմստվոներն են հէնց, որ Անդլիալի կառավարութեան հիմքն են կազմում, նրա արմատը, որից ծառի նման դէպի վեր է բարձրանում և զարգանում հասարակական ինքնադործունէութիւնը:

Հասակաւոր բոլոր գիւղական բնակիչները՝ 21 ապրեկանից ոչ պակաս, մասնակցում են իրանց զեմստվոյական կառավարութեան՝ այսինքն գիւղական զեմստվոյական ժողովներին, այլևայլ հարցերի քննութեան և գիւղական պաշտօնատար անձանց ընտրութեան:

Ժողովներին, զանազան հարցերի քննութեան, ընտրութիւններին մասնակցում են հաւասարապէս թէ տղամարդիկ և թէ կանայք *), թէ՝ տէրերը

*). Այս՝ — կանայք ևս՝ սեռերի բաղաքական իրաւահաւասարութիւն:

Այստեղ, գիտողութեան մէջ պէտք է ասենք, որ կանանց իրաւահաւասարեցումը անխուսափելիորէն առաջ է զալիս այն դրութիւնից, որը բոնած է մեղանում արդի կինը հասարակական գործունէութեան ասպարիգում:

Տնտեսական պայմաններն և գոյութեան կոփորմեղանում ևս հասարակական գործունէութեան ասպարէզն են կանչում կնոջ:

Անկարելի է ներկայումս կանանց գործունէութեան շրջանը փոքրացնել, որովհետեւ անտեսական պայմանների շնորհիւ թէ ընտանիքը և թէ կապիտալիզմը անկարող են ներկայումս կնոջ աշխատանքից հրաժարուելու:

Այն ինչ, չնայած կնոջ տնտեսական գործու-

և թէ ծառաները, թէ կալուածատէրերը, թէ հասարակ հողագործները, հարուստներն ու աղքատները, իշխանն ու հասարակ անձնաւորութիւնը:

Գիւղական գեմստվօյական ժողովին գումարում են հարիւր, հարիւր-յիսուն հոգի, քննութեան են ենթարկում, օրինակ, այսպիսի հարցեր՝ տեղական գիւղական ճանապարհի նորոգումը, հասարակական բաղանիքի հիմնարկումը, գրադարանի համար շէնք ճարելը կամ կառուցանելը, հրդէնաշէջ խողովակ ձեռք բերելը, անտունների համար էժանագին բնակարանի կառուցումը, նամակացրիչ վարձելը և այլն և այլն:

Մի խօսքով տեղական այլեալլ մանր գործերը գիւղական զեմստվօներն են վարում. և հէնց իրանց գիւղացիներից զատ ոչք, ոչ մի խոշոր զեմստվօ

նեութեան աւելի ու աւելի լայն չափեր ընդունելուն, նրա սոցիալական իրաւունքները գեռ հասարակական հին յարաբերութիւններին են համապատասխանում:

Կնոջ դրութիւնը արմատապէս բարւոքելու համար պէտք է նրան թուլատրել միւս չափահաս քաղաքացիների հետ միասին օրէնսդրութեան մասնակցելու, այն է՝ քաղաքական իրաւունքներ տալ նրան:

Եւ սեռերի զարգացման գաղափարը կաշկանդող հասարակական յայտնի նախապաշարումների դէմ ուղղուած կոիւր զեռատի հասակից պէտք է սկսել, զեռ դպրոցական նստարանից, որի համար անհրաժեշտ է զպրոցներում երկու սեռերի միասին ուսանելը, ինչպէս օրինակ ֆինլեանդիայում:

չէր խառնուի, ի հարկէ, այդ մանր-մունր գործերին:

Իւրաքանչիւր օգտակար ծեռնարկութեան համար միջոցներ և փող է հարկաւոր, ի հարկէ:

Ուստի և գիւղական զեմստվօյական ժողովները օրինական իրաւունք ունեն բնակիչներին հասարակական պէտքերի համար փոքր տուրքի ենթարկել և այդ իրաւունքը կոչւում է հարկագրութեան իրաւունք:

Այդ առուրքը պարտաւոր է վճարել զեմստվօյական ժողովի իւրաքանչիւր անդամ. սակայն բոլորովին յայտնի և պարզ է գոնէ, թէ ուր են զնում այդ տուրքերը, հասարակական ինչ կարիքի վրայ պիտի գործադրուեն:

Զեմստվօյական բոլոր վճիռները տեղական

Երկու սեռերի իրաւահաւասարութեան գաղափարը երեխանները իրանց կեանքի հէնց առաջին քայլերից պէտք է իւրացնեն. պէտք է տղաների և աղջիկների յարաբերութիւնները ընկերական դարձնել, մատաղ հասակից պէտք է ոչնչացնել դաստիարակութեան և կրթութեան մէջ տիրող անհաւասարութիւնը, այլ խօսքով՝ կրթութեան բոլոր աստիճաններում, ամեն հասակում ուսումը միատեղ պիտի լինի. դա սեռերի հաւասարութեան խնդրի կարգինալ հարցն է, որի հետ անքականիօրէն կապուած է այնպիսի հարցերի լուծումը, ինչպէս կնոջ իրական մասնակցութիւնը ընարական ընդհանուր իրաւունքի և տեղական ինքնավարութեան մէջ, ինչպէս կանանց վերաբերեալ բոլոր սահմանափակումների վերացումն:

բնակիչների համար իրանց սեփական վճիռներն են հանդիսանում, զեմստվօյական ծախսերը՝ իրանց ժախսերը:

Ոչոք չի փաթաթում այդ վճիռները բնակիչների վղին, ոչոք չի շտապում հարց ու փորձ անելու, ցուցմունքներ տալու:

Փոքր գիւղերում, որաեղ 300 հոգուց էլ պակաս է բնակիչների թիւը, գիւղական զեմստվօյական կամ ծխական ժողովները ամեն տարի մի նախագահ են ընտրում և մի քանի լիազօրներ, որոնք վարում են գիւղի զեմստվօյական բոլոր գործերը և եթէ ժողովի ուեէ որոշումը նրանք թերի կամ վատ են կատարում, զրա համար պատժի են ենթարկում հետեւեալ տարին պաշտօն չեն ստանում:

Ալդպիսով գիւղական զեմստվօնները անդիայում ամենամանը զեմստվօններն են, տեղական ինքնավարութեան ամենափոքր միութիւնները:

Բացի այդ, Անզիիալում դոյութիւն ունեն նաև շրջանալին զեմստվօններ, որոնք բաղկացած են իրար միացած մի քանի ծխական կամ գիւղական զեմստվօններից. իսկ ալդպիսի միացումները անհրաժեշտ են գործի լաշողութեան համար:

Զէ՞ որ ամեն մի գիւղ (ծուխ) առանձին հնարաւորութիւն չունի գլուխ բերել այն բոլորը, ինչ որ կրցանկար, իսկ մեղ մօտ, աւելացնենք, շնորհիւ մեր անկուլտրականութեան և վալրենութեան, ոչինչ չեր դուրս գալ:

Գիւղական հիւանդանոց հիմնելը, կամ 2—3 դասրանով գիւղատնտեսական դպրոց հաստատելը, և

կամ մի ուրիշ նման ձեռնարկութիւն գլուխ բերելը փոքր զեմստվօնի ոյժերից վեր է՝ դրանք նիւթական մեծ միշոյներ են պահանջում, բացի այդ ձեռնուու էլ չէ գիւղերին առանձին-առանձին ձեռնարկել դրանց:

Ահա թէ ինչու 15—20 ժուխ միանալով, մի շրջան են կազմում. այդ ձեռվ ահա մեր գիւղացիք հիւանդանոց հիմնել կրկարողանալին:

Ալդպիս ուրեմն, թողի իւրաքանչիւր գիւղ անկախօրէն ինքը վարէ իւր մանր գործերը. դա է գիւղական զեմստվօն. աւելի կարեսոր, աւելի բազմածախս ու դժուարին գործերի համար պէտք է մի քանի գիւղեր միանալով մի շրջան կազմեն: Վերչինիս գործերը թողի վարչութիւնը կամ զեմստվօյական ժողովը վարէ. դա էլ շրջանալին զեմստվօ կրկազմէ. իւրաքանչիւր գաւառում կրլինի 5—10 շրջան:

Իսկ աւելի խոշոր և կարեսոր, լուրջ գործերի համար կազմւում են նահանդական զեմստվօններ՝ ընարուած ամբողջ նահանդի ազգաբնակութեան ձեռով առանց դասակարգի և կարողութեան խտրութեան:

Պէտք է աշխատել այդ բոլորը մացնել մեր մէջ և լայն շրջանակով տարածել այդ գաղափարները. մեր կիրակնօրեալ գպրոցներում զեմստվօյական մանր միութիւնը զրուցատրութեան գլխաւոր առարկալ պիտի դառնալ և եկեղեցում քարոզի զիսաւոր նիւթը:

Զեմստվօյական մանր միութիւնը անհրաժեշտ

է քո մարմնի և մտքի համար՝ կուշտ կըլինես և զարդացած, հետևապէս և առողջ հասարակութեան և պետութեան օգտակար անդամը կըլինիս. այլապէս մեր դիւլը անձէտ է լինում, անձէտ ենք լինում նաև մենք:

ի.

Ղազախի շրջանում գիւղատնտեսական դպրոց հիմնելու առթիւ հաւաքուեցին 49 գիւղի ներկայացուցիչները, խորհրդակցեցին միասին, և գրեթէ իւրաքանչիւր գիւղ ձգտում էր իւր սահմանում բանալ այդ դպրոցը և ստանալ Դաւթեանի ժառանգներից 60.000 ըուբլին:

Այդ կարեոր իրողութիւնը տարաբազզաբար քիչ ուշադրութիւն դրաւեց. խօսքը 49 գիւղերի համախորհրդակցութեան մտսին է:

Հնարաւորութիւն ունեն ուրեմն գոնէ 5—7 գիւղ միասին հաւաքուելու և տեղական գործերը միասին քննելու. թող այդպիսի համաշրջանները, օրինակ, «Արտ» կոչեն և կեանքի մէջ մտցնեն «մէկը բոլորի, բոլորը մէկի համար» սկզբունքը:

Գործ շատ կայ. կառավարութեան կողմից, կարծում ենք, արդելք չի յարուցուի կուլտուրական նախաձեռնութիւնների դէմ. չէ՞ որ կառավարութիւնը ինքը մտադիր է, ամենայն հաւանականութեամբ, մեղանում ևս զեմստվո մտցնել. մենք պատրաստ պիտի լինենք, մեղանում գործութիւն պիտի ունենայ արդէն զեմստվոյի սաղմը:

Գիշեր-ցերեկ, բերանից-բերան պիտի քարոզել, զրոյներ սարքել, լայն պրոպագանդա պիտի մղել զեմստվոյական մանր միութեան համար և այն ժամանակ կառավարութիւնը ընդառաջ կերթակ այդ ձեռնարկութիւններին. դա կարագացնէ մեղանում ևս զեմստվո մտցնելու գործը: Ներկայ Դումայում արդէն զեկուցումներ պիտի լինեն մեր զեմստվոյի մասին. մենք, կրկնում ենք, պատրաստ պէտք է լինենք այնպիսի առաջնակարգ կարևորութեան և անհրաժեշտ գործոնի կիրառման, ինչպէս զեմստվոյն է:

Թող լայնարձակ տարածուեն «Արտ» միութիւնները. ամեն ոք թող օգնի ինչով կարող է.

Մի կողմ մնան կուսակցական կիրքն ու գրժառութիւնները, թող անի խելացի սէրը. չէ՞ որ ժողովուրդը, ցեղն է մահասպառ լինում: Անկարելի է այլևս այսպիս ապրել:

Հասարակութեան անտարբերութիւնն է կուլտուրայի և մարդկութեան գործունեալ թշնամիների զարգացման պատճառը:



ՎԵՀԱՓՈԽ ՀԱՅԻԻԿԻ ԱՆՄՌԱՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հայրիկի մեծ անունը յաւէտ կապրի նաև հասարակական առողջապահութեան պատմութեան մէջ: Տառապեալ հայ ժողովրդի անհուն ցաւերի հոգսեբով տարուած, նա մոռացութեան չտուեց նրա առողջապահական վիճակն ևս և իւր նշանակալից կոնդակով մեր հասարակութեան առողջապահական մակերեսով բարձրացնելու մի խթան ևս աւելացրեց:

Նա ապահովեց բիւրաւորների ընտանեկան անդորրութիւնը, գալիք սերունդի առողջ զարգացումը՝ և ապագայ հասարակութիւնը անհուն երախտազիտութեամբ կ'արտասանէ Մեծ Ծերունու անունը և պարտաւոր էլ է:

Թող սուրբ լինի մեզ համար ալդ կոնդակի վեհ գաղափարը, այն է ամուսնութիւնից առաջ բժշկից առողջութեան վկայական ստանալու պահանջը:

Ներկայ գրքով մամուլի տակ էր արդէն, երբ հեռագիրը դուժեց Մեծ Մարդու մահը:

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- | | | |
|---|----|----|
| 1. Ըռաջին օգնութիւն մինչև բժշկի զալը (սպառ.) | 5 | 4. |
| 2. Վարակիչ հիւանդութիւններ | 5 | " |
| 3. Ի՞նչ է սիֆելիսը | 5 | " |
| 4. Առողջապահական զույցներ | 5 | " |
| 5. Ի՞նչ է ժուժկալութիւնը | 5 | " |
| 6. Ի՞նչ է անառակութիւնը | 5 | " |
| 7. Վեներական ախտեր | 5 | " |
| 8. Աշակերտի առողջապահութիւն | 2 | " |
| 9. Մեր ներարգերը | 10 | " |
| 10. Սիֆիլիս (բարեփոխուած) | 10 | " |
| 11. Առողջ հողին առողջ մարմինի մէջ | 10 | " |
| 12. Գեղձախտ (զօլոտուխտ) | 10 | " |
| 13. Ո՞վ է յանցաւորը | 15 | " |
| 14. Կարիք և բարեզգործութիւն | 15 | " |
| 15. Ժառանդականութիւն և դաստիարակութիւն | 15 | " |
| 16. Մանկավարժական համառօտ զրոյցներ | 15 | " |
| 17. Մարմինամարզութիւն (25 պատկերով) | 20 | " |
| 18. Առողջապահական նուեր նորատի կանանց | 20 | " |
| 19. Կինը և տղամարդը | 15 | " |
| 20. Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա | 5 | " |
| 21. Ի՞նչ է կաշու հիւանդութիւնը. | 15 | " |
| 22. Երիտասարդութիւն և ծերութիւն. | 15 | " |
| 23. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին. | 20 | " |
| 24. Աւղեղի սիֆելիսը (զլիսի և ողնաշարի) | 20 | " |
| 25. Ստամոքսի կատարը | 20 | " |
| 26. Քուն և երազ (մի պատկերով) | 25 | " |
| Մեծագիր պատկեր «Քուն և երազ» առանձին | 10 | " |
| 27. Գործարան թէ երկրագործութիւն. | 15 | " |
| 28. Սնապաշտութիւն ու կախարդութիւն | 20 | " |
| 29. Մտերժական խորհրդ պատանիներին (օնանիզմ) | 20 | " |
| 30. Գոյութեան կույ. | 20 | " |
| 31. Խուզայլի Վիրտով | 25 | " |
| 32. Սէր և խանդ (մի պատկերով) | 20 | " |
| 33. Անառակութիւն և պոռնկութիւն | 20 | " |
| 34. Նուեր հայ զինւորին | 20 | " |
| 35. Նուեր հայ վարժապետին (դպրոցական առողջապահութիւն): | 20 | " |
| 36. Նուեր հայ դպրոցականին (Մեր օրերը) | 10 | " |
| 37. Աւթժամեայ բանուորական օր (մի պատկ.) | 10 | " |
| 38. Ժողովրդական առողջապահութիւն (հիւանդացում և մահացութիւն) | 10 | " |

ԴԻՄԵԼ՝ Թիֆլիս, Կենտրոնական և Գուտտենբերգ գրավաճառանոցները, Պահատը գտնւում է՝ Պետերբուրգ, «Պուշկինեան Արագածական» և Հշտուկով փող. տ. 4.

Պաւլկինեան Արագատիով
Ս.-Պետերբուրգ, Լեզուկով, 4

Գինն է 10 կրկ.

1224-1232

Երևան 931. 2. դեկտ.

ՀԱՅ. Տ. ԱՅՀ

2013

«Ազգային գրադարան



NL0072563

«Ազգային գրադարան



NL0072567

«Ազգային գրադարան



NL0072562

«Ազգային գրադարան




NL0072566

«Ազգային գրադարան



NL0072561

«Ազգային գրադարան



NL0072565

«Ազգային գրադարան



NL0072560

«Ազգային գրադարան



NL0072564

«Ազգային գրադարան



NL0072559

